«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԼՈՌՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ԼՏՊՔ, ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (կամ ՄՈՒՀ-ի անվանումը) ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

Բովանդակություն

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 6

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 12

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 15

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 15

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 18

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 22

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 29

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 34

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 38

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 41

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 45

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 48

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 52

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 56

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 57

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 57

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 58

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 62

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 64

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը հիմնադրվել է 1970 թվականին՝ որպես Երևանի առևտրատնտեսագիտական տեխնիկումի Կիրովականի մասնաճյուղ: Տարիների ընթացքում քոլեջը մի քանի անգամ անվանափոխվել է՝ 1971-ին դառնալով Կիրովականի սովետական առևտրի տեխնիկում, 1987-ին՝ Կիրովականի պետական տեխնոլոգիական տեխնիկում, 1992-ին՝ Վանաձորի տեխնոլոգիական տեխնիկում, իսկ 2002-ին՝ Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ: Վերջին անվանափոխությունը տեղի է ունեցել 2011 թվականին՝ հաստատությունը վերանվանվել է Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ[1]:

2020 թվականին քոլեջը առաջին անգամ անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում 2021 թվականին ստացել է 2 տարի ժամկետով պայմանական հավատարմագրում: Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը տեղակայված է Լոռու մարզում:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը տարածաշրջանում ունի կարևոր դերակատարություն, նպաստելով փոքր և միջին բիզնեսի մասնակիցների պատրաստմանը՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի միջոցով: Քոլեջը նաև ապահովում է սպասարկման ոլորտի աշխատողների վերապատրաստում՝ լրացուցիչ կրթական ծրագրերի և կարճաժամկետ դասընթացների միջոցով:

Լոռու մարզում գործում են 9 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցից մեկը ոչ պետական է, իսկ երկուսը՝ արհեստագործական: Այս հաստատություններում իրականացվում է ուսուցում 99 մասնագիտություններով[2]:

Մարզի զարգացման գերակա ուղղությունները ներառում են հանքարդյունաբերությունը, թեթև արդյունաբերությունը (հատկապես Վանաձորում՝ թեթև արդյունաբերությունն ու մեքենաշինությունը), ինչպես նաև զբոսաշրջության զարգացումը[3]:

---

[1] ԼՏՊՔ ինքնավերլուծություն, էջ 7

[2] Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն, էջ 11

[3] Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն, էջ 12

Քոլեջի կրթական ծրագրերի ուղղությունները համահունչ են մարզի զարգացման գերակա ուղղություններին՝ ներառելով այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են՝ «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» և «Ռոբոտաշինություն»: Այս ծրագրերը ուղղված են թե՛ տարածաշրջանի արդյունաբերական, թե՛ զբոսաշրջային ոլորտների պահանջարկի բավարարմանը:

Քոլեջում ներկայումս սովորում է 492 ուսանողներ: Ներկայումս քոլեջում դասավանդում են 44 դասախոս, որոնցից 43-ը ունեն բարձրագույն կրթություն, 1-ը՝ միջին մասնագիտական: Դասախոսական կազմի ներկայացուցիչներից 2-ը գիտությունների թեկնածու են: 2023-2024 ուստարվա 107 շրջանավարտներից 20-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, իսկ 33-ը աշխատում են, որոնցից 14-ը՝ իրենց մասնագիտությամբ:

Քոլեջին «Շուկայաբանություն», «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում», «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտությունների ընդունելության համար յուրաքանչյուր տարի տրամադրվում է 20 լիցենզիոն տեղ հիմնական կրթության հենքով և 25 տեղ՝ միջնակարգ կրթության հենքով (հեռակա՝ 25, 20, 25), «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Առևտուր» մասնագիտությունների համար՝ 20 լիցենզիոն տեղ հիմնական կրթության հենքով և 40 տեղ՝ միջնակարգ կրթության հենքով (հեռակա՝ 25, 40), «Մենեջմենթ (կառավարում)» մասնագիտության ընդունելության համար՝ 20 լիցենզիոն տեղ հիմնական կրթության հենքով և 45 տեղ՝ միջնակարգ կրթության հենքով (հեռակա՝ 25), «Պոլիգրաֆիական արտադրություն» մասնագիտության համար՝ 20 լիցենզիոն տեղ: «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Զբոսաշրջություն», «Մեխատրոնիկա» և «Ռոբոտաշինություն» մասնագիտությունների ընդունելության համար յուրաքանչյուր տարի հատկացվում են 25 լիցենզիոն տեղ ինչպես հիմնական, այնպես էլ միջնակարգ կրթության հենքով: Վերջիններն հիմնականում լրացվում են, սակայն 2024-2025 ուստարվա ընթացքում որոշ կրթական ծրագրերի համար դիմորդներ չեն եղել, մասնավորապես՝ «Զբոսաշրջություն», «Առևտուր» և «Ռոբոտաշինություն» (փորձարարական) մասնագիտություններով:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը գտնվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլում:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է՝ «պատրաստել փոքր և միջին բիզնեսի մասնակիցներ՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի և տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ապահովել սպասարկման ոլորտի աշխատողների և առանձին անհատների վերապատրաստումը լրացուցիչ կրթական ծրագրերի ու կարճաժամկետ դասընթացների միջոցով, դուալ կրթության միջոցով պատրաստել աշխատաշուկայում առավել որակյալ մրցունակ մասնագետներ և ապահովել կրթական ծրագրերի համապատասխանությունը աշխատաշուկայի, սպասարկման ոլորտի զարգացող ու փոփոխվող պահանջների»:

Նախորդ հավատարմագրումից հետո Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը կատարել է կարևոր քայլեր իր ռազմավարական ծրագրի հստակեցման և աշխատաշուկայի պահանջներին համարժեք կրթական ծրագրերի ներդրման ուղղությամբ: Քոլեջի առաքելությունը վերանայվել է 2023-2030 թթ. ռազմավարական ծրագրում՝ ընդգծելով միջին մասնագիտական կրթության, վերապատրաստման և դուալ ուսուցման կարևորությունը: Այնուամենայնիվ կարևոր է հստակեցնել ռազմավարական նպատակները՝ դրանք դարձնելով չափելի ինչպես նաև սահմանել ռազմավարական նպատակների համար հստակ չափելի ցուցիչներ, ինչը թույլ կտա պարբերաբար գնահատել դրանց իրականացման առաջընթացը, իսկ ֆինանսական պլանավորման կատարելագործումը, ֆիանսական աղբյուրների բազմազանեցումը կնպաստեն ռեսուրսների առավել նպատակային բաշխմանը և կապահովեն հաստատության երկարաժամկետ զարգացումը:

Քոլեջի կառավարման համակարգում համատեղվում են միանձնյա և կոլեգիալ մոտեցումները, իսկ ուսանողների և դասախոսների մասնակցության ակտիվացումը կառավարչական գործընթացներում հնարավորություն կտա որոշումների կայացման հիմքում դնել շահակիցների իրական կարիքները: Ներքին և արտաքին գործոնների պարբերական վերլուծությունը, մասնավորապես՝ աշխատաշուկայի պահանջների մշտադիտարկումը և մասնագիտական ոլորտի զարգացումների ուսումնասիրությունը, կօգնեն ճշգրտել ռազմավարական ուղղությունները և բարձրացնել ծրագրերի արդիականությունը:

Ռազմավարական պլանավորման առկայությունը կարևոր է հաստատության զարգացման համար: Փորձագիտական խումբը դրական է գնահատում նախորդ հավատարմագրումից հետո կարճաժամկետ պլանների բարելավումը, իսկ դրանց կապակցումը

ռազմավարական պլանավորմանը կդարձնի ռեսուրսների բաշխումն ավելի նպատակային և կխթանի ռազմավարական նախաձեռնությունների արդյունավետ իրագործումը: Սա կերաշխավորի ոչ միայն ընթացիկ գործառույթների շարունակականությունը, այլև ռազմավարական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ միջանկյալ քայլերի հստակեցումը:

Փորձագիտական խումբը նշում է, որ նախորդ հավատարմագրումից հետո իրականացված քայլերն այս փուլում դեռ չեն հանգեցրել որակի ապահովման համակարգի լիարժեք ներդրմանը հաստատությունում: Գործող համակարգը չի ստեղծում բավարար հիմքեր հաստատության ռազմավարական զարգացմանն աջակցելու համար, իսկ շահերի բախման հնարավորությունը կարող է սահմանափակել կառավարման համակարգի խնդիրների վերհանումը և նվազեցնել կառավարման գործընթացների արդյունավետությունը:

Քոլեջում իրականացվում են ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում հարցումներ, սակայն դրանց արդյունքների հիման վրա փոփոխությունների իրականացումը չի կրում համակարգված բնույթ: Արտաքին շահակիցների հետ համագործակցությունը և նրանց առաջարկների վրա հիմնված ծրագրային բարելավումները դեռևս ամբողջական չեն:

Տվյալների վրա հիմնված կառավարումը, որը ներառում է ուսանողների, դասախոսների և գործատուների հետ կապված վերլուծությունների պարբերական իրականացումը, թույլ կտա բարելավել հաստատության որակի ապահովման համակարգը և կրթական ծառայությունների մատուցման արդյունավետությունը:

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը կատարում է քայլեր իր մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ՝ համապատասխանեցնելով դրանք աշխատաշուկայի պահանջներին: Վերջին տարիներին ներդրվել են նոր մասնագիտություններ՝ հիմնված տարածաշրջանի զարգացման առաջնահերթությունների վրա: Դուալ կրթության ներդրումը և գործատուների հետ համագործակցությունը նպաստում են ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունն անհրաժեշտություն ունի ներդնելու կրթական ծրագրերի բենչմարքինգի ու մշտադիտարկման իրականացման հստակ մեխանիզմներ, ինչը թույլ կտա կրթական ծրագրերի բարելավումների միջոցով բարձրացնել շրջանավարտների մրցունակությունը աշխատաշուկայում: Գնահատման չափանիշների շարունակաբար բարելավումը և ուսանողներին տրվող հետադարձ կապի մեխանիզմները ևս պետք է մշտապես լինեն քոլեջի ուշադրության կենտրոնում՝ ապահովելու ուսանողների մասնագիտական աճը և կրթական ծրագրով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը:

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը ձևավորել է դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համալրման հստակ քաղաքականություն: Դասախոսների մասնագիտական որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավանդվող առարկաներին, իսկ գործատուների ներգրավումը դասավանդման գործընթացում նպաստում է աշխատաշուկայի պահանջների և կրթական ծրագրերի համապատասխանեցմանը:

Քոլեջում առկա են դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, իսկ դրանց համակարգված վերանայումը կնպաստի դասախոսների մասնագիտական զարգացմանն ու

դասավանդման արդյունավետության բարձրացմանը: Դասախոսների համար նախատեսված խրախուսման և վերապատրաստման գործընթացները նույնպես կարևոր դեր ունեն մասնագիտական առաջընթացի ապահովման գործում, վերհանված կարիքների հիման վրա վերապատրաստումների նպատակային ֆինանսավորումը կնպաստի դասախոսական կազմի կարողությունների զարգացմանը:

Քոլեջը քայլեր է ձեռնարկում դասախոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ՝ ապահովելով սերնդափոխությունը և մասնագիտական շարունակականությունը: Սակայն դասախոսական կազմի կայունությունն ու որակյալ կադրերի պահպանումը կարող են առավել արդյունավետ լինել՝ համապատասխան ռեզերվային համակարգի ստեղծման դեպքում:

Քոլեջն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ապահովման և կրթական ծրագրերի իրականացման համար: Վերջին տարիներին միջազգային ծրագրերի և համագործակցությունների միջոցով զգալիորեն բարելավվել են քոլեջի ենթակառուցվածքները, ստեղծվել են նոր լաբորատորիաներ և մասնագիտական կաբինետներ, ինչը նպաստում է գործնական հմտությունների զարգացմանը: Սակայն, քոլեջն առայժմ չունի ռեսուրսների համալրման և զարգացման հստակ ֆինանսական պլանավորում, ինչը կարող է ազդել բարելավումների կայունության վրա:

Քոլեջը գործնական ուսուցման համար օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, ինչը դրական ազդեցություն ունի ուսանողների մասնագիտական պատրաստվածության վրա:

Քոլեջը տրամադրում է ուսանողների աջակցության մեխանիզմներ, ինչպիսիք են մասնագիտական կողմնորոշման միջոցառումները: Ուսանողների կարիքների վերհանման և աշխատանքները որոշակի արդյունքներ տվել են, սակայն դրանց արդյունավետության պարբերական գնահատումը և օտար լեզուների ուսուցման լրացուցիչ հնարավորությունների զարգացումը կարող են էապես նպաստել ուսանողների մրցունակության բարձրացմանը:

Քոլեջում հետազոտական գործունեությունը ռազմավարական առաջնահերթություն չի դիտարկվում, սակայն մասնագիտական մոդուլների շրջանակում ուսանողները կատարում են հետազոտական-վերլուծական աշխատանքներ, որոնք նպաստում են գործնական հմտությունների զարգացմանը: Ուսանողների աշխատանքները ներառում են անհատական և խմբային հետազոտություններ, սակայն հետազոտական ուղղությունները դեռևս առանձնացված չեն:

Դիպլոմային աշխատանքները նպաստում են ուսանողների վերլուծական և ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանը, սակայն հետազոտությունների գնահատման չափանիշները հստակեցված չեն: Դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման համար մեխանիզմների ներդրումը կնպաստի նորարարական մոտեցումների և հետազոտական կարողությունների զարգացմանը:

Քոլեջում գործում է ներքևից վերև հաշվետվողականության համակարգ, որն ապահովում է գործունեության թափանցիկությունը, վերահսկողությունը և աշխատանքների պարբերական գնահատումը: Տնօրենի հաշվետվությունները ներառում են ուսումնական և ֆինանսական տվյալներ, սակայն դրանք որպես առանձին, ամբողջական փաստաթուղթ չեն ներկայացվում, ինչը կարող էր առավել ամփոփ կերպով ներկայացնել իրականացված միջոցառումների

արդյունքները և ապահովել դրանց կապը քոլեջի ռազմավարական նպատակների հետ։ Քոլեջն օգտագործում է Ֆեյսբուք սոցիալական հարթակը տեղեկատվության տարածման համար, իսկ 2025 թվականից նախատեսվում է գործարկել պաշտոնական կայք՝ թափանցիկությունն ու տեղեկատվության հասանելիությունը բարձրացնելու նպատակով։

Քոլեջն իր ռազմավարական ծրագրով արտաքին կապերի և միջազգայնացման զարգացումը դիտարկում է որպես առաջնահերթություն՝ նպատակ ունենալով տեղայնացնել միջազգային առաջավոր փորձը, ներդնել կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ և ինտեգրվել կրթության գլոբալ համակարգերին։ Քոլեջը համագործակցում է գործատուների հետ՝ ապահովելով ուսանողների պրակտիկաներ և դուալ կրթական ծրագրեր, ինչն աջակցում է նրանց մասնագիտական պատրաստվածությանը։ Միջազգային ծրագրերի շրջանակում քոլեջն ներգրավված է Erasmus+ նախագծերում, ինչը խթանում է դասախոսների վերապատրաստումը և ուսանողների համար նոր հնարավորությունների ստեղծումը, սակայն մինչ այժմ ուսանողների և դասախոսների շարժունության դեպքեր չեն արձանագրվել։

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցումը տարածաշրջանի զարգացման առաջնահերթություններին,
2) ղեկավար կազմի կողմից իրականացված գործընթացները ռեսուրսների համալրման ու միջազգայանցման գործընթացներում ընդգրկման ուղղությամբ,
3) դուալ կրթական համակարգի ներդրումը և զարգացումը,
4) տեխնոլոգիական մասնագիտությունների զարգացումը և նորարարական կրթական մոտեցումների կիրառումը,
5) գործատուների հետ ակտիվ համագործակցությունը՝ կրթական ծրագրերի արդիականացման համար,
6) ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների խթանումը,
7) արտադրական ուսուցման լաբորատորիաների առկայությունը և դրանց համալրումը,
8) միջազգային համագործակցության ծրագրերի իրականացումը և արտաքին կապերի հաստատման ուղղությամբ շարունակական քայլերի իրագործումը։

Հաստատության թույլ կողմերն են.

1) ռազմավարական ծրագրի որոշ նպատակների համար չափելի ցուցիչների բացակայությունը,
2) ուսանողների և դասախոսների նախաձեռնողականության պակասը որոշումների կայացման գործընթացներում,
3) կրթական ծրագրերի բենչմարքինգի և մշտադիտարկման մեխանիզմների անբավարար ձևավորումը,
4) հաստատության գործունեության ոչ բոլոր ուղղությունների վերաբերյալ տվյալների պարբերական հավաքագրումը և տվյալների առկայությունը կառավարչական որոշումների կայացման համար,
5) ֆինանսական աղբյուրների բազմազանեցման պակասը,

6) ուսանողների կարիքների պարբերական վերլուծության մեխանիզմների անկատարությունն ուսումնական միջավայրի բարելավման համար,
7) դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստման և հետազոտական գործունեության խթանման սահմանափակ հնարավորությունները,
8) հաշվետվողականության մեխանիզմների պակասը արտաքին շահակիցների շրջանում տեղեկատվության ամբողջական տարածման նպատակով,
9) ներքին շահակիցների՝ անգլերենի իմացության բարձրացմանն ուղղված միջոցառումների բացակայությունը։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1) Հստակեցնել Ռազմավարական նպատակները և դրանց գնահատման որակական ու քանակական առանցքային ցուցիչները։
2) Բարելավել ստորաբաժանումների կարճաժամկետ պլանները՝ դրանք կապակցվելով ռազմավարական նպատակներին։
3) Դիտարկել տնօրենի հաշվետվությունները մեկ ամբողջական փաստաթղթով ներկայացնելու հնարավորությունը, որը կապահովի համապարփակ վերլուծություն՝ ըստ ՌԾ նպատակների։
4) Բազմազանացնել տվյալների հավաքագրման մեխանիզմները և դրանք կիրառել քոլեջի բոլոր ուղղությունների վերաբերյալ պարբերաբար կարիքների գնահատման նպատակով։
5) Վերհանված կարիքները և հավաքագրված տվյալները կիրառել կառավարչական որոշումների կայացման համար։
6) Համալրել որակի ապահովման պատասխանատուի հաստիքը՝ ապահովելով որակի ապահովման գործընթացների անկախությունը։

Որակավորումների արժանահավատ շնորհում

7) Ներդրել և կիրառել գործնական հմտությունների կանոնավոր գնահատման գործիքակազմ՝ ուսանողների հմտությունների շարունակական զարգացման և արդյունավետության բարձրացման նպատակով։
8) Իրականացնել բենչմարքինգ՝ համագործակցելով տեղական և միջազգային ուսումնական հաստատությունների հետ՝ լավագույն փորձի ուսումնասիրության և տեղայնացման նպատակով։
9) Ներդնել կրթական ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմներ՝ օգտագործելով շահակիցների արձագանքները, շրջանավարտների մասնագիտական հետագծի վերլուծությունը և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները։
10) Պարբերաբար գնահատել դասախոսների վերապատրաստման կարիքները և տրամադրել ֆինանսական համապատասխան միջոցներ կարիքների հիման վրա

դասախոսների մասնագիտական զարգացմանն ուղղված վերապատրաստումների իրականացման նպատակով։

11) Հստակեցնել դասախոսական և վարչական կազմի գնահատման և խրախուսման չափանիշները։
12) Արդիականացնել համակարգչային տեխնիկան և ներդնել ժամանակակից համակարգչային ծրագրեր՝ ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար։
13) Բազմազանեցնել ֆինանսական միջոցների ներգրավման աղբյուրները՝ դիտարկելով պետական, մասնավոր և միջազգային ֆինանսավորման հնարավորությունները։

Երկարաժամկետ զարգացում

14) Իրականացնել ուսանողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետության գնահատում և բարելավում՝ ուսանողների հետ անցկացվող հարցումների և հետադարձ կապի միջոցով պարզելով խնդիրները և մշակելով հստակ քայլեր՝ ծառայությունների որակը բարձրացնելու համար։
15) Ներդնել մեխանիզմներ դասախոսների հետազոտական աշխատանքներ իրականացնելու և դրանց խրախուսման համար՝ խթանելով հետազոտությունների զարգացումը և բարձրացնելով դրանց կարևորությունը կրթական գործընթացում։
16) Բարելավել արտաքին հաշվետվողականության մեխանիզմները՝ տարեկան հաշվետվությունները, հաստատության ձեռքբերումները տեսանելի դարձնելով արտաքին շահակիցների ավելի լայն շրջանակի համար։
17) Քայլեր ձեռնարկել ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման համար՝ կրթական ծրագրերի լավ փորձի ուսումնասիրման ու շարժունության խթանման նպատակով։
18) Մշակել միջազգայնացման հստակ քաղաքականություն՝ սահմանելով համագործակցության ուղղությունները, ակնկալվող արդյունքները և առավել ակտիվ ներգրավելով ներքին շահակիցներին։

Փորձագիտական խմբի ղեկավար

Լիլիթ Աբելյան
մարտի 3, 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[4] կողմից.

1. **Լիլիթ Աբելյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատու, դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Օլեգ Գևորգյան՝** ՀԱՊՀ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալ, Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Սուսաննա Պիչիկյան՝** Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
4. **Արտակ Խաչատրյան՝** Հայաստանի Եվրոպական համալսարանի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Լիանա Ալավերդյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 31.01.2024թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո 02.04.2024թ. Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն։

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ։

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 02.07.2024թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից։

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[5]:

Նախնական այց

13.11.2024թ. առցանց հանդիպում է տեղի ունեցել Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. նոյեմբորի 18-20-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, պրակտիկաների, ռեսուրսերի[6] դիտարկում և փաստաթղթերի[7] դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 20.02.2025թ.-ին: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրել է փորձագետներին: Այնուհետև ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են հաստատության դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 03.03.2025թ.-ին:

Համակարգող
Լիանա Ալավերդյան

մարտի 3, 2025թ.

[6] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[7] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը, հաշվի առնելով նախորդ հավատարմագրման արդյունքում իրեն տրված խորհրդատվությունն առաքելությունը հստակեցնելու ուղղությամբ, վերանայել և ձևակերպել է իր առաքելությունը 2023-2030 թթ. Ռազմավարական ծրագրում: Այսպիսով, քոլեջի առաքելությունն է՝ պատրաստել փոքր և միջին բիզնեսի մասնակիցներ՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի և տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ապահովել սպասարկման ոլորտի աշխատողների և առանձին անհատների վերապատրաստումը լրացուցիչ կրթական ծրագրերի ու կարճաժամկետ դասընթացների միջոցով, դուալ կրթության միջոցով պատրաստել աշխատաշուկայում առավել որակյալ մրցունակ մասնագետներ և ապահովել կրթական ծրագրերի համապատասխանությունը աշխատաշուկայի, սպասարկման ոլորտի զարգացող ու փոփոխվող պահանջներին: Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան: Տարածաշրջանի զարգացման ուղղությունների վերլուծությունը ցույց է տվել, որ քոլեջի կրթական ծրագրերը համահունչ են Լոռու մարզի առաջնահերթություններին: Մասնավորապես, քոլեջը մասնագետներ է պատրաստում զբոսաշրջության, հագուստի պատրաստման տեխնոլոգիայի, համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկման և այլ ոլորտներում:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա քոլեջը վերանայել է իր տեսլականը և նպատակները: Ըստ ՌԾ-ի՝ քոլեջի հիմնական նպատակներն են կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրումը, մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների և միջազգային փորձի ներդրումը, հարակից ուսումնական հաստատությունների զարգացմանն օժանդակելը, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող որակյալ մասնագետների պատրաստումը և այլն: Քոլեջը կազմել է Զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույց (այսուհետ՝ ԶՌԾ պլան-ժամանակացույց), որտեղ նշված են ՌԾ նպատակների իրականացման համար խնդիրներ, դրանցլուծմանն ուղղված միջոցառումներ, ակնկալվող արդյունքներ, պատասխանատուներ, գնահատման ցուցիչներ և ժամկետներ:

Նպատակների ու սահմանված ցուցիչների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ որոշ դեպքերում քոլեջը սահմանել է հստակ քանակական ցուցիչներ: Այսպես օրինակ՝ քոլեջի հաշվետվողականության բարձրացումն ապահովելու համար ցուցիչներ են սահմանվել տեղեկատվական գովազդող նյութերի հրատարակումը՝ ամսական 150 հատ, քոլեջի կայքի այցելուների թվաքանակի աճը՝ տարեկան 10%-ով: Այնուամենայնիվ, ՌԾ որոշ նպատակների

համար սահմանված ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման ցուցանիշները շարունակում են մնալ ընդհանրական և հստակ չափելի չեն։ Օրինակ, մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում նորարարությունների, միջազգային փորձի տեղայնացման, կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդրման ու կրթության գլոբալ համակարգերին ինտեգրման նպատակի համար որպես ակնկալվող արդյունքներ սահմանվել են միջազգայնացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումը, օտար լեզուներով ուսուցանվող դասընթացների կազմակերպումը, արտասահմանյան քոլեջների հետ ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերի իրականացումը և այլն։ Դրանց գնահատման ցուցիչներն են միջազգային համագործակցության ծրագրերի թվի ավելացումը, օտար լեզուներով ուսուցանվող առարկաների թվի աճը և այլն։ Սակայն, քոլեջը չի սահմանել, թե համագործակցության ծրագրերի կամ օտար լեզվով դասընթացների ինչ մակարդակն է համարվում բավարար՝ սահմանված նպատակներին հասնելու համար։ Բացի այդ, հաստատությունը չի վերլուծել, թե արդյոք նախատեսված ակնկալվող արդյունքները լիովին ապահովում են նպատակների իրագործումը։ Ռազմավարական նպատակների իրականացման համար ԶՌԾ պլան-ժամանակացույցում ֆինանսական միջոցներ նախատեսված չեն։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՌԾ որոշ նպատակների ուղղությամբ քոլեջը քայլեր իրականացրել է, մասնավորապես աշխատանքներ են տարվել ՄԿԾ-ները համապատասխանեցնելու աշխատաշուկայի պահանջներին, ձեռքբերելու անհրաժեշտ ռեսուրսներ, համալրելու ՄԿԾ նպատակների իրականացման համար անհրաժեշտ դասախոսական կազմով, հաստատելու արտաքին կապեր ու միջազգային համագործակցություններ։

Ըստ ՌԾ-ի՝ քոլեջի շահակիցներն են դպրոցների, քոլեջների, բուհերի շրջանավարտները, աշխատակիցները, ուսումնառողները, սպասարկման ոլորտի աշխատակիցները, փոքր և միջին բիզնեսի մասնակիցները, համայնքային տարբեր խմբեր և անհատ քաղաքացիներ։

Ռազմավարական ծրագիրը մշակելիս կարիքների համակարգված վերլուծություն չի իրականացվել, սակայն փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ դրա մշակման ընթացքում հաշվի են առնվել տարածաշրջանի և գործատուների կարիքները, հատկապես մասնագիտական կրթական ծրագրերի ուղղությունները սահմանելիս։ Փորձագիտական այցի ընթացքում նաև պարզվեց, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են նրա որդեգրած առաքելությունը և կարևորում քոլեջի դերը՝ տարածաշրջանի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման գործում։

Քոլեջում ՌԾ-ի գնահատման հստակ մեխանիզմներ դեռևս չկան։ Գործող ՌԾ-ի մշակման համար նախորդ ՌԾ-ի նպատակների իրագործման գնահատում չի կատարվել։ Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի հաշվետվությունները հիմնականում կապված են ռազմավարական ծրագրի նպատակների հետ, սակայն սահմանված արդյունքների գնահատման գործընթացը դեռևս համակարգված ձևով չի իրականացվում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը, հաշվի առնելով նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները, 2023-2030 թթ. ռազմավարական ծրագրում հստակեցրել է իր առաքելությունը՝ ընդգծելով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումը: Այս ուղղությամբ կարևոր քայլ է որոշ կրթական ծրագրերում դուալ ուսուցման ներդրումը, ինչը թույլ կտա ուսանողներին ձեռք բերել գործնական հմտություններ և բարելավել նրանց մրցունակությունը: Դրական է նաև, որ ռազմավարական ծրագրում ներառվել են լրացուցիչ և կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ, որոնք կնպաստեն շարունակական մասնագիտական զարգացմանը և կստեղծեն լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ քոլեջի կայուն գործունեության համար:

Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ ՌԾ-ի նպատակների իրագործման համար ֆինանսական ռեսուրսների նախատեսումը հնարավորություն կտա ապահովել ծրագրում ներառված միջոցառումների կայուն իրագործումը և ռեսուրսների առավելագույն արդյունավետությամբ կիրառումը:

ՌԾ-ի ակնկալվող արդյունքների և ցուցիչների ռազմավարական նպատակների հետ հստակ կապակցումը կբարձրացնի ռազմավարական պլանավորման արդյունավետությունը և կապահովի քոլեջի կայուն զարգացումը: Որակական ու քանակական հստակ ցուցիչների սահմանումը բոլոր նպատակների համար թույլ կտա գնահատել իրականացվող միջոցառումների արդյունավետությունը և ապահովել ավելի իրատեսական ու նպատակային պլանավորում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ տարածաշրջանի և գործատուների կարիքները հիմնականում արտացոլված են ռազմավարական ծրագրում: Այս համատեքստում շահակիցների կարիքների պարբերական վերլուծության մեխանիզմների ներդրումը թույլ կտա ռազմավարական ծրագիրը համապատասխանեցնել աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին:

Դրական է, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել հաշվետվությունները ռազմավարական զարգացման ծրագրի նպատակներին համահնչեցնելու ուղղությամբ: Պարբերական մշտադիտարկումը հնարավորություն կտա վեր հանել խնդիրները, վերանայել գործընթացները և ապահովել նպատակների իրագործումը: Փորձագիտական խումբը կարևորում է ռազմավարական ծրագրի գնահատման և բարելավման հստակ մեխանիզմների ներդրումը, ինչը թույլ կտա վերահսկել սահմանված արդյունքների ձեռքբերման մակարդակը և բարելավել հետագա պլանավորումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո հստակեցրել է իր առաքելությունը, ներքին ու արտաքին շահակիցները կարևորում են քոլեջի դերն ու նշանակությունը տարածաշրջանում, ՌԾ իրականացման պլան-ժամանակացույցում սահմանվել են քոլեջի զարգացման նպատակներն ու խնդիրները, առանձնացվել են պատասխանատուներ ու ժամկետներ, քոլեջը փորձ է արել մշակելու գնահատման ցուցիչներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԼՏՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

«Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացվում է տնօրենի, Կառավարման, Ուսումնամեթոդական և Տնօրինական խորհուրդների կողմից՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ: Քոլեջում գործող խորհուրդների, ստորաբաժանումների գործունեության և լիազորությունների շրջանակը սահմանվում է համապատասխան կանոնակարգերով:

Կառավարման խորհուրդն իրականացնում է քոլեջի կոլեգիալ կառավարումը: Կառավարման խորհուրդն իր լիազորությունների շրջանակում հաստատում է քոլեջի ռազմավարական ծրագիրը, նորմատիվ փաստաթղթերը, բյուջեի նախահաշիվը:

Տնօրինական խորհրդում քննարկվում են ավարտական, պետական և ընթացիկ քննությունների ու ստուգարքների կազմակերպման, դրանց արդյունքների ամփոփման, ինչպես նաև քոլեջից ուսանողների հեռացման և վերականգնման հետ կապված հարցերը:

ՄՈՒՀ-ն ունի նաև Ուսումնամեթոդական խորհուրդ, որն ակտիվ գործունեություն է ծավալում՝ նիստերում քննարկվում են պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ծրագրերի իրագործման, ուսումնական բովանդակության, սովորողների ուսումնառության առաջընթացի, ինչպես նաև նրանց արտալսարանային և արտաքոլեջային աշխատանքների կազմակերպման հարցերը և կայացվում են համապատասխան որոշումներ:

Դասախոսները և ուսանողները ներգրավված են կոլեգիալ կառավարման մարմիններում, ինչպես նաև որակի հանձնախմբում: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս խորհուրդներում ներգրավված ուսանողները և դասախոսները նախաձեռնողական չեն Կառավարման խորհրդում խնդիրների վերհանման գործընթացում: Այցի ընթացքում նաև պարզ դարձավ, որ ուսանողների և դասախոսների խնդիրները հիմնականում վերաբերում են ուսումնառության գործընթացի կազմակերպմանը, որոնք լուծվում են ստորաբաժանումների և Ուսումնամեթոդական խորհրդի համագործակցության արդյունքում՝ դեռևս մինչև Կառավարման խորհուրդներում քննարկման փուլին հասնելը:

Խորհուրդների նիստերի արդյունքների տարածումը և դասախոսների շրջանում իրազեկումն իրականացնում են բաժնի վարիչները, իսկ ուսանողները տեղեկանում են ՈՒԽ-ի քննարկումների միջոցով:

Անդրադառնալով կազմակերպական կառուցվածքին՝ կարելի է նշել, որ հաստատությունն ունի անհրաժեշտ օղակներ ռազմավարական նպատակների իրագործման համար։ ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև հորիզոնական և ուղղահայաց կապերը։

Քոլեջը 2024 թվականին մշակել և հաստատել է դասախոսական և վարչական աշխատակիցների պաշտոնի անձնագրերը՝ նախորդ հավատարմագրման ընթացքում ստացված խորհրդատվության հիման վրա։ Այս գործընթացի արդյունքում վարչական անձնակազմի գործառույթները հստակեցվել են։

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ որոշ դեպքերում քոլեջի հաստիքային աշխատակիցները կատարում են մեկից ավելի գործառույթներ։ Մասնավորապես, մեթոդիստը միաժամանակ իրականացնում է նկարչության կաբինետի վարիչի և դասախոսի պարտականությունները, իսկ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը նաև պատասխանատու է որակի ապահովման գործընթացների կազմակերպման համար, ինչպես նաև դասավանդում է։

Քոլեջի բյուջեն բաշխվում է տարեկան պլանի համաձայն՝ հիմք ընդունելով ֆինանսատնտեսական նախահաշվի նախագիծը։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ 2024 թվականին քոլեջի բյուջեի եկամուտների 95.7%-ը ձևավորվել է պետական ֆինանսավորումից, իսկ 4.3%-ը՝ ուսանողների վարձավճարներից և կարճաժամկետ ծրագրերից։ Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջի ղեկավարությունը քայլեր է ձեռնարկել ներդրողների և դրամաշնորհային միջոցների ներգրավման ուղղությամբ, ինչի արդյունքում համալրվել է քոլեջի ռեսուրսային բազան։ Օրինակ՝ ձեռք են բերվել վերականգնվող էներգիայի աղբյուրների և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կենտրոն-լաբորատորիաների հիմնական սարքավորումները, խոհանոցային նոր տեխնիկա և այլն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ձեռքբերված ռեսուրսները ֆինանսական աղբյուրների բազմազանեցման նպատակով կիրառվում են նաև կարճաժամկետ դասընթացների շրջանակներում։ Բացի այդ, քոլեջը մասնակցում է «Erasmus+» և այլ միջազգային ծրագրերին, որոնց արդյունքում ևս ապահովում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ։ Իսկ բյուջետային ծախսերի հիմնական ուղղություններն են աշխատավարձերը (86.13%), ծառայությունների և ռեսուրսների ձեռքբերումը (13.22%) և այլ ծախսերը (0.65%)։

Քոլեջի գործունեությունը կազմակերպվում է ռազմավարական երկարաժամկետ պլանավորման և կառուցվածքային ստորաբաժանումների ընթացիկ ու տարեկան կարճաժամկետ պլանավորման հիման վրա։ Միջնաժամկետ պլաններ քոլեջի կողմից չեն մշակվում։ Ստորաբաժանումների աշխատանքային պլանների վերլուծությունը ցույց տվեց, որ դրանց մեծ մասը կրկնում է նախորդ տարիների պլանավորված գործողությունները։ Հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները՝ քոլեջը քայլեր է ձեռնարկել պլանների ու ռազմավարական ծրագրի նպատակների համահնչեցման ուղղությամբ։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ պլաններում որոշ չափով ներառված են ռազմավարական ծրագրի խնդիրներն ու դրանց իրագործման համար նախատեսված քայլերը, սակայն ընդհանուր առմամբ դրանք հիմնականում կենտրոնացած են ուսումնական գործընթացի ընթացիկ աշխատանքների վրա, ինչպիսիք են

ակադեմիական պարտք ունեցող ուսանողների համար անհատական առաջադրանքների տրամադրումը, դասախոսների մոտ դասալսումների կազմակերպումը և այլն։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քոլեջի կառավարման համակարգը գործում է վերևից ներքև ուղղահայաց կառավարման մոդելով, իսկ հաշվետվողականությունը կազմակերպվում է ներքևից վերև սկզբունքով՝ ստորաբաժանումներից դեպի ղեկավար կազմ։

Քոլեջը գործընթացների վերահսկողության և մշտադիտարկման գործիք է համարում ստորաբաժանումների հաշվետվությունները, որոնք քննարկվում են ուսումնամեթոդական խորհրդի նիստերում։ Հաշվետվությունները ներկայացվում են կիսամյակային կտրվածքով։ Դրանց դիտարկումը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում վերլուծական են, ներկայացնում են ընթացիկ կատարված գործընթացները՝ նշելով դրանց արդյունքները և համեմատելով նախորդ տարիների ցուցանիշների հետ։ Այսպես օրինակ, Ուսումնական մասի հաշվետվությունում ներկայացված են ՊԿՉ-ների վերանայմամբ պայմանավորված կրթական ծրագրերի բարելավման հետագա քայլերը կրթական գործընթացները կազմակերպելու և ՊԿՉ-ներին համահունչությունն ապահովելու համար, վերլուծվում են ուսանողների առաջադիմության տվյալները՝ ըստ կրթական ծրագրերի։ Տնօրենի հաշվետվությունը ձևավորվում է ուսումնական և ֆինանսական մասերի հաշվետվությունների միավորումից։ Տնօրենի կողմից ներկայացված աշխատանքների արդյունքներն ամփոփվում են Կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններում։

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը տվյալներ է հավաքում ներքին գործոնների ուսումնասիրության և կարիքների վերհանման համար՝ օգտագործելով հարցումներ։ Դրանք անցկացվում են ուսանողների, ծնողների, շրջանավարտների և գործատուների շրջանում։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջի ղեկավարությունը, հիմք ընդունելով այս հարցումների արդյունքները, ձեռք է բերել համակարգիչներ։

Նախորդ հավատարմագրման զեկույցի համաձայն՝ քոլեջում համակարգված ձևով չէր իրականացվում արտաքին գործոնների ուսումնասիրությունը։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այժմ այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ իրականացվում են կարիերայի կենտրոնի միջոցով։ Այն զբաղվում է աշխատաշուկայի վերլուծությամբ, արտաքին շահակիցների հետ համագործակցությամբ և հետադարձ կապի ապահովմամբ։ Այսկերպ, հաշվի առնելով գործատուների առաջարկները՝ քոլեջը «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» կրթական ծրագիրը սկսել է իրականացնել դուալ ուսուցման մոդելով։ Բացի այդ, մարզի զարգացման ուղղությունները հաշվի առնելով՝ քոլեջը նախաձեռնել է օտար լեզվի խորացված ուսուցմամբ զբոսաշրջության ոլորտի կրթական ծրագրի իրականացումը։

Հարկ է նշել, որ քոլեջում ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության համար այլ գործիքակազմ դեռևս մշակված չէ, և գործընթացը չունի պարբերական բնույթ։

Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը փորձ է կատարել իր գործընթացներում ներդնել ՊԻԳԲ սկզբունքը։ Մասնավորապես, դուալ կրթական ծրագրերի ներդրման շրջանակում քոլեջը գնահատել է դրանց արդյունավետությունը՝ հաշվի առնելով ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացումը, գործատուների պահանջներին համապատասխան պատրաստվածությունը և աշխատաշուկայի պահանջարկը։ Այս

գնահատման հիման վրա քոլեջը ավելացրել և նախատեսում է ավելացնել այն կրթական ծրագրերի թիվը, որոնք իրականացնում են ուսուցման դուալ տարբերակով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քոլեջում հիմնական գործընթացները գտնվում են իրականացման փուլում:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ իրականացվում են ընթացիկ գործունեության մասին հրապարակումներ, լուսաբանվում են ուսանողների ընթացիկ առաջադրանքները, ավարտական աշխատանքները: Քոլեջում դեռևս ներդրված չեն տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և այդ գործընթացների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջի կողմից իրականացված ջանքերը և կառավարչական մոտեցումները նպաստել են քոլեջի զարգացման ուղղություններով առաջընթացի արձանագրմանը ու հաստատությունում ընթացող գործընթացների բարելավմանը: Փորձագիտական խմբի գնահատմամբ ուսանողների ու դասախոսների կողմից կարիքների վերհանման նախաձեռնողականության խթանումը և ներգրավվածության ավելացումը որոշումների կայացման գործընթացում կհանգեցնի կրթական միջավայրի շարունակական բարելավմանը՝ հիմնված շահակիցների կարիքների և առաջարկների վրա:

Քոլեջի ֆինանսավորումը հիմնականում ապահովվում է պետական միջոցներով, ինչը հնարավորություն է տալիս հաստատության գործունեությունն անխափան շարունակել: Քոլեջը որոշ քայլեր է ձեռնարկել դրամաշնորհային ծրագրեր ներգրավելու ուղղությամբ, այսուհանդերձ ֆինանսական կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է ձևավորել եկամուտների բազմազանեցման աղբյուրներ: Դրանք կարող են ներառել միջազգային ծրագրերից ստացվող ֆինանսավորում, վճարովի դասընթացների կամ ծառայությունների մատուցում, ինչպես նաև մասնավոր հատվածի հետ գործընկերություն, որը կարող է հանգեցնել լրացուցիչ ներդրումների: Այս մոտեցումը թույլ կտա քոլեջին ընդլայնել ռեսուրսային հնարավորությունները և զարգացնել կրթական ծրագրերը՝ դրանք ավելի արդիական ու պահանջված դարձնելով:

Քոլեջի կազմակերպական կառուցվածքում առկա են ռազմավարական նպատակների իրագործման համար անհրաժեշտ օղակները, սակայն աշխատակիցների կողմից միաժամանակ մի քանի գործառույթների իրականացումը կարող է հանգեցնել գերծանրաբեռնվածության և վարչական գործընթացների դանդաղեցման: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է վերանայել հաստիքների բաշխվածությունը՝ ինչը կապահովի ավելի արդյունավետ աշխատանքի կազմակերպում:

Ռազմավարական պլանավորման առկայությունը կարևոր գործոն է հաստատության զարգացման համար: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ նախորդ հավատարմագրումից հետո լավարկվել են կարճաժամկետ պլանները, իսկ դրանց կապակցումը ռազմավարական պլանավորմանը կնպաստի ռեսուրսների նպատակային բաշխմանը և ռազմավարական նախաձեռնությունների ավելի արդյունավետ իրագործմանը: Սա թույլ կտա ապահովել ոչ միայն ընթացիկ գործառույթների շարունակականությունը, այլև

ռազմավարական նպատակների իրագործման համար անհրաժեշտ միջանկյալ գործողությունների հստակեցումը:

Քոլեջում իրականացվող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրությունը բարելավվել է, սակայն գործընթացը դեռևս չունի պարբերական բնույթ, ինչը կարող է սահմանափակել տվյալների հիման վրա կայացված որոշումների արդյունավետությունը: Ներքին և արտաքին գործոնների վերլուծության պարբերաբար իրականացումը թույլ կտա ապահովել կրթական միջավայրի շարունակական բարելավում և կրթական ծրագրերի համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին:

ՊԻԳԲ սկզբունքի որոշ կիրառությունները ցույց են տալիս որակի բարելավման գործընթացների ներուժը, սակայն դրանց ամբողջական ներդրման բացակայությունը կարող է սահմանափակել կայուն բարեփոխումների իրականացումը: Եթե որակի բարելավման այս մոտեցումը դառնա ինստիտուցիոնալ գործելակերպ՝ ապահովելով պարբերական գնահատում և հետագա զարգացում, ապա կրթական ծրագրերի արդիականացման և ուսանողների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման գործընթացը կլինի առավել հետևողական:

Քոլեջի կողմից սոցիալական հարթակների օգտագործումը խթանում է ուսանողների աշխատանքների հանրայնացումը, կրթական ծրագրերի մասին տեղեկատվության տարածումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատումը կարևոր է տեղեկատվության տարածումն առավել նպատակային ու համակարգված դարձնելու տեսանկյունից:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի կառավարումն իրականացվում է միաձնյա և կոլեգիալ կառավարման մեխանիզմների զուգակցմամբ, կառավարման համակարգն ապահովում է հաստատության ռազմավարական նպատակների իրագործումը, կառավարման օղակները գործում են հստակ կանոնակարգերով, հաստատությունն ունի անհրաժեշտ նյութական ու ֆինանսական ռեսուրսներ կրթական գործընթացներն իրականացնելու համար, նախորդ հավատարմագրումից հետո վերանայվել են պլանավորման ու հաշվետվողականության մեխանիզմները, քոլեջը հաշվի է առնում գործատուների ու մարզի կարիքները իր զարգացման ուղղությունները սահմանելիս, վարչարարության ու կրթական ծրագրերի բարելավման գործընթացներում որոշակիորեն կիրառվում է ՊԻԳԲ սկզբունքը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն համապատասխանում է Չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԼՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական 11 կրթական ծրագրեր հետևյալ մասնագիտություններով՝ «Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի)», «Շուկայաբանություն», «Առևտուր», «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», «Պոլիգրաֆիական արտադրություն», «Մեխատրոնիկա», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Զբոսաշրջություն», «Ռոբոտաշինություն» (փորձարարական)։

«Մեխատրոնիկա» մասնագիտությունը ներդրվել է 2018-2019 ուստարվանից, «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունը՝ 2020-2021 ռուումնական տարվանից, իսկ «Ռոբոտաշինություն» մասնագիտությունը՝ 2022-2023 ուստարվանից։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նոր ներդրվող կրթական ծրագրերի համար հիմք են հանդիսացել մարզի զարգացման ուղղությունները։

Հարկ է նշել, որ «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությունն իրականացվում է կրեդիտային համակարգով, ինչի ներդրմամբ քոլեջը նախատեսել է հիմքեր ստեղծել շարժունության իրականացման համար։ Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը դեռևս չի օգտագործվում ուսանողների շարժունությունն իրականացնելու համար։

2019 թվականից Քոլեջում իրականացվում է դուալ ձևաչափով ուսումնառություն։ ԼՏՊՔ-ում իրականացվող մասնագիտություններից 5-ը՝ «Մեխատրոնիկա», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Ռոբոտաշինություն» (փորձարարական), «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» և «Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի)» իրականացվում են դուալ ձևաչափով «Գերմանական միջազգային համագործակցության ընկերության» (GIZ) կազմակերպության աջակցությամբ։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջը սկսել է «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» կրթական ծրագիրը դուալ ուսուցմամբ իրականացնել գործատուների առաջարկով։ Այս ձևաչափը ներդրվել է ուսանողների գործնական հմտությունները զարգացնելու և նրանց ավելի պատրաստված մասնագետներ դարձնելու նպատակով։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» և «Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի)» կրթական ծրագրերի դուալ ուսուցումը մեկնարկել է 2024-2025 ուստարվանից։

Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» կրթական ծրագրի դուալ ձևաչափով իրականացնելու հիմք է հանդիսացել շուկայի ուսումնասիրությունները և արտաքին շահակիցներից ստացված արձագանքները, իսկ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունը ներդրվել է

հաշվի առնելով ՀՀ կառավարության տարածքային և համայնքային զարգացման ծրագրերը (2020 թվականին մարզը համարվել է զբոսաշրջային մարզ)։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուների առաջարկով Քոլեջը նախատեսում է ներդնել նաև «Լոգիստիկա» մասնագիտությունը՝ այդ մասնագիտությամբ առկա թափուր աշխատատեղերի քանակը հիմք ընդունելով։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի աճ է նկատվում «Պոլիգրաֆիկական արտադրություն», «Մեխատրոնիկա», «Զբոսաշրջության կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունների ուղղությամբ։ Հարկ է նշել, որ ուսանողների թիվը նախորդ փորձագիտական այցից հետո տարեցտարի աճել է՝ միջինում 350-ից հասնելով 492-ի։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2024-2025 ուստարում քոլեջում դիմորդներ չեն եղել «Զբոսաշրջություն», «Առևտուր» և «Ռոբոտաշինություն» (փորձարարական) մասնագիտություններով։

ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը մասնակցում է պետական կրթական չափորոշիչների կազմմանը և վերանայմանը, մասնավորապես՝ «Մեխատրոնիկա», «Ռոբոտաշինություն», «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» և «Պոլիգրաֆիկական արտադրություն» մասնագիտություններով։

Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, որոշ ուսումնական պլաններում ներառված են նաև ընտրովի և պահուստային ժամերով նախատեսված առարկաներ։ Օրինակ՝ «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրում ընդգրկվել է «Արտադրության կազմակերպում և կառավարում» ընտրովի առարկան, որը առաջարկվել է գործատուի կողմից։ Իսկ «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» և «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտական ծրագրերում ներդրված ընտրովի առարկաները ներկայումս բացակայում են նոր ՊԿՉ-ներում։

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական, արտադրական և նախաավարտական։ Ուսումնական պրակտիկա անցկացվում է երրորդից մինչև վեցերորդ կիսամյակներում, իսկ նախաավարտական կամ արտադրական պրակտիկաները՝ 7-րդ կիսամյակում։ Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դուալ կրթական ծրագրերի շրջանակում պրակտիկա չի իրականացվում, իսկ պրակտիկ կարողությունները ձևավորվում են ուսումնական պլանով նախատեսված՝ գործնական ուսուցում կազմակերպությունում ժամաքանակով, որը իրականացվում է գործատուների մոտ։ Սակայն այցի ընթացքում իրականացված դասալսումներից պարզ դարձավ, որ օրինակ՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության շրջանակում գործատուի մոտ իրականացվող դասապրոցեսը կրում էր տեսական բնույթ և անցկացվում էր դասախոսության մեթոդով։

Քոլեջը բոլոր հինգ դուալ կրթական ծրագրերով ունի գործատու գործընկերներ։ Պրակտիկաների իրականացման համար պատասխանատու է պրակտիկայի վարիչը, որն ամեն տարի կազմում է ուսումնական տարվա աշխատանքային պլանը՝ հիմք ընդունելով

պրակտիկայի ժամանակացույցը և համապատասխանեցնելով այն դասացուցակի հետ։ Պրակտիկայի ղեկավարների հետ քննարկում է աշխատանքային պլանները, ուսանողներին ծանոթացնում է պրակտիկայի անցկացման կարգին, ծրագրին, իրավունքներին և պարտականություններին։ Նա հետևում է ներքին կարգապահական կանոնների պահպանմանը, ընտրում է պրակտիկայի անցկացման վայրերը, կնքում և վերակնքում պայմանագրեր գործատուների հետ, հավաքագրում ուսանողների օրագիր-հաշվետվությունները և ներկայացնում հաշվետվություն ուսումնամեթոդական խորհրդին։

«Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտության ԿԾ-ի համար առկա են նախաավարտական և արտադրական պրակտիկաների ծրագրեր, որոնք հաստատվել է տնօրենի կողմից և ներկայացնում է պրակտիկայի անցկացման ժամերի քանակը, թեմաները և այլն։ Օրինակ՝ «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտության արտադրական պրակտիկայի ծրագրում ներկայացված են պրակտիկայի նպատակները, առաջադրված խնդիրները, կարի և ձևող արտադրամասերի մեքենասարքավորումների և վերջնամշակման տեղամասի (պատրաստի արտադրանքի պահեստի) մեքենասարքավորումների, տրանսպորտային միջոցների ուսումնասիրությունը և այլն։

Պրակտիկայի ավարտից հետո ուսանողները ներկայացնում են հաշվետվություն։ «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» մասնագիտության «Էլեկտրոնային աղյուսակների մշակման տեխնոլոգիաներ», «Ռելյացիոն տվյալների հենքերի նախագծում» և «Համակարգիչների կառուցվածքը» մոդուլների ուսումնական պրակտիկաների դիատրկումից պարզ դարձավ, որ ուսանողներին ներկայացված թեմաները և ներկայությունը նշված են ուսումնական պարապունքների մատյանում, իսկ ուսանողների կողմից ներկայացված հաշվետվություններում արտացոլված են առաջադրանքները, որոնք համապատասխան են նշված թեմաներին։

Քոլեջում դասախոսների կողմից դասավանդման մեթոդների ընտրության համար միասնական մոտեցում չի կիրառվում, սակայն ընտրված մեթոդները նպատակաուղղված են ուսուցման վերջնարդյունքների և դրանց կատարման չափանիշների ապահովմանը։ Փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դասախոսները կարևորում են ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացումը, օրինակ՝ դասերի ընթացքում կազմակերպում են խմբային քննարկումներ և այլն։ Հետազոտական կարողությունների զարգացման նպատակով Քոլեջում իրականացնում են կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, դիպլոմային աշխատանքներ և մոդելավորման աշխատանքներ տարբեր համակարգչային ծրագրային փաթեթներով (C++, AutoCAD, Logic Line, FESTO FluidSIM, SOLIDworks)։

Ըստ նախորդ փորձագիտական զեկույցի՝ ուսուցումն առավելապես իրականացվում էր դասախոսությունների միջոցով։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ այս ուղղությամբ քոլեջը առաջընթաց է գրանցել, և այժմ ուսումնառությունը ներառում է նաև լաբորատոր և գործնական առաջադրանքներ։ Այսպես օրինակ՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» ՄԿԾ-ի շրջանակում Զբոսաշրջության լաբորատորիաում ուսանողներին առաջադրվում են

հյուրանոցային ծառայությանն առնչվող տարբեր իրավիճակային խնդրիներ, «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» ՄԿԾ-ի շրջանակում ուսանողները լաբորատորիայում ծանոթանում են համակարգչային պրոցեսորների ճարտարապետությանը, ինտերնետային մալուխների հետ աշխատանքին և այլն:

ՄՈՒՀ-ում առկա է «Ուսանողների գիտելիքների գնահատման» կարգ: Նախորդ փորձագիտական զեկույցի համաձայն՝ մասնագիտական կրթական ծրագրերում արտայատված չէին գործնական հմտությունների ձևավորմանը նպաստող բաղադրիչները: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջը կատարել է բարելավումներ այս ուղղությամբ: Այժմ բոլոր հարցաշարերը ներառում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական հարցեր: Բացի այդ, գործնական հմտությունների զարգացման համար ուսումնական գործընթացում կիրառվում են ինչպես իրական, այնպես էլ վիրտուալ լաբորատորիաներ, և ակտիվ ներգրավվածություն ունեն գործատուները՝ դուալ կրթական ձևաչափով իրականացվող ծրագրերում:

Մոդուլային ծրագրերում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման ձևը, որը կարող է լինել ինքնագնահատում, հարցուպատասխան, թեստային առաջադրանք և այլն: Գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար առանձնացված են բանավոր հարցեր և տրվում է գործնական առաջադրանք:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը ուսանողների գնահատման գործընթացում հիմնականում շեշտադրում է ուսուցանվող նյութի յուրացման մակարդակը, իսկ գործնական պարապմունքների դեպքում՝ նրանց պրակտիկ հմտությունների գնահատումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատման միասնական մոտեցումներ և հստակ չափանիշներ դեռևս ներդրված չեն, դասախոսական կազմը գնահատման ձևն ընտրում է՝ հաշվի առնելով դասավանդվող մոդուլի առանձնահատկությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները տրամադրում են անհրաժեշտ հետադարձ կապ ուսանողներին, պատասխանում անհասկանալի հարցերին:

Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի ընթացքում: Պրակտիկայի արդյունքների գնահատումը կատարվում է ուսանողների գրավոր հաշվետվության և ղեկավարի կարծիքի հիման վրա: Փորձագիտական այցի պարզ դարձավ, որ օրինակ՝ «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» ՄԿԾ-ի ուսումնական պրակտիկայի շրջանակում ուսանողներն ստանում են առաջադրանքներ, որոնք լինում են ինչպես համակարգչով իրագործվող, այնպես էլ իրական նախագծերի տեսքով (օրինակ՝ արևին հետևող ֆոտովոլտային վահանակի կառավարման համակարգի մշակում կամ Microsoft Excel ծրագրային փաթեթի միջոցով տվյալների հետ աշխատանքների իրականացում և այլն):

«Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» և «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» ՄԿԾ-ի ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություններ, իսկ «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ները իրականացնում են դիպլոմային աշխատանք: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ դիպլոմային աշխատանքներն իրականացվում են Քոլեջի դասախոսների ղեկավարությամբ և ուսանողները տրված թեմաների շրջանակներում ստեղծում են հագուստի նմուշներ: Ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակ ներգրավված են լինում նաև գործատուներ, որոնք հանդես են գալիս առաջարկներով: Այսպես օրինակ գործատուների առաջարկով «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» կրթական ծրագրում ավելացվել է CorelDRAW համակարգչային ծրագրի ուսուցումը:

Քոլեջում ուսանողների գնահատականների բողոքարկման գործընթացը սահմանված է «Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների բողոքների քննարկման կարգով»: Գնահատականի բողոքարկման դեպքեր քոլեջում գրանցվել են, ուսանողներն ըստ կարգի բողոքարկել են իրենց գնահատականը և վերահանձնել քննությունը:

ՄՈՒՀ-ը մշակել է «Մասնագիտական ծրագրերի մշակման և մշտադիտարկման» կարգ: Ասյուհանդերձ, փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի համեմատական վերլուծության ու մշտադիտարկման իրականացման հստակ մեխանիզմներ և գործիքներ քոլեջում դեռևս ներդրված չեն: Փորձագիտական այցից պարզվեց, որ ՄԿԾ-ների փոփոխությունների վերաբերյալ քննարկումները տեղի են ունենում հիմնականում ներքին շահակիցների և գործատուների հետ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Լոռու տարածաշրջանային պետական քոլեջն իրականացնում է տարածաշրջանային կարիքներից բխող միջին մասնագիտական կրթական ծրագրեր, որոնք համապատասխանում են Քոլեջի առաքելությանը և ՀՀ ՈԱԾ-ի պահանջներին: Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերը հնարավորություն են տալիս ուսանողներին ձեռք բերել այնպիսի գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են շուկայում մրցունակ լինելու համար: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը հետևողական է ՀՀ կառավարության տարածքային և համայնքային զարգացման ծրագրերին, աշխատաշուկայի պահանջներին և արտաքին շահակիցներից ստացված արձագանքներին, ինչը թույլ է տալիս արձագանքել փոփոխվող տնտեսական և սոցիալական պայմաններին և ապահովել կրթական գործընթացի արդիականությունը:

Դրական է նաև, որ «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության կրթական ծրագրում ներդրված է կրեդիտային համակարգ, սակայն այն դեռևս լիարժեք չի կիրառվում ուսանողների շարժունության և կրթական ծրագրերի համադրելիության ապահովման նպատակով: Համակարգի արդյունավետ օգտագործումը կարող է նպաստել ուսանողների միջազգային շարժունության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը զարգացնում է գործատուների հետ համագործակցությունը և ակտիվ ներգրավում նրանց կրթական գործընթացներում, ինչը նպաստում է ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը: Դուալ կրթության ձևաչափի կիրառումը հնարավորություն է տալիս ուսանողներին համատեղել տեսական գիտելիքներն ու գործնական փորձառությունը, ինչը բարձրացնում է նրանց պատրաստվածության մակարդակը և մրցունակությունը աշխատաշուկայում:

Քոլեջի դասախոսական կազմի մասնակցությունը պետական կրթական չափորոշիչների կազմման և վերանայման գործընթացներին, ինչպես նաև կրթական ծրագրերի մշակմանը՝ գործատուների ներգրավմամբ, դիտվում է որպես արդյունավետ փորձ, որը կարող է զարգացնել կրթության որակը և ուսուցման համապատասխանությունը շուկայի պահանջներին:

Դրական են նախորդ հավատարմագրումից հետո դասավանդման և գնահատման համակարգում արձանագրված բարելավումները: Ասյուհանդերձ, փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջում դեռևս չկա դասավանդման և գնահատման մեթոդների ընտրության միասնական մոտեցում: Կիրառվող մեթոդները հիմնականում ուղղված են ուսուցման վերջնարդյունքների ապահովմանը, սակայն անհրաժեշտ է զարգացնել այնպիսի մեթոդներ, որոնք կխթանեն ուսանողների գործնական հմտությունների կանոնավոր զարգացումը և կապահովեն նրանց մասնագիտական առաջընթացին համապատասխան հետադարձ կապ:

Դրական է, որ գնահատման գործընթացում կիրառվում են տարբեր մեթոդներ, ինչը նպաստում է ուսանողների գիտելիքների և հմտությունների բազմակողմանի գնահատմանը: Գնահատման հստակ չափանիշների և համակարգված մեխանիզմների ներդրումը կնպաստի գնահատման համակարգի արդյունավետության և օբյեկտիվության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացումը և մշտադիտարկման հստակ մեխանիզմների ներդրումը, որոնք կնպաստեն Քոլեջի կրթական գործընթացների շարունակական բարելավմանը և որակի բարձրացմանը: Քոլեջի մասնակցությունը միջազգային ծրագրերին, ինչպես նաև ներքին և արտաքին շահակիցների հետ համագործակցությունը ստեղծում է բարենպաստ պայմաններ բենչմարքինգ իրականացնելու համար, ինչը կաջակցի լավագույն փորձի փոխանակմանը և ծրագրերի համապատասխանեցմանը միջազգային չափանիշներին:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև կրթական ծրագրերի մշտադիտարկման գործիքների ներդրումը և դրանց պարբերական կիրառումը: Շահակիցների արձագանքների, շրջանավարտների մասնագիտական հետագծի պարբերական դիտարկման, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների վերլուծության միջոցով իրականացվող բարելավումները կնպաստեն կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը և ուսանողների ձեռք բերած հմտությունների և գիտելիքների առավելագույն համապատասխանեցմանը աշխատաշուկայի պահանջներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո ձեռնարկել է քայլեր կրթական ծրագրերի բարելավման և դրանք աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ, իրականացնում է տարածաշրջանային կարիքներից բխող միջին մասնագիտական կրթական

ծրագրեր, դասախոսական կազմը ներգրավված է պետական կրթական չափորոշիչների կազմման և վերանայման գործընթացներում, քոլեջն ակտիվ համագործակցում է գործատուների հետ բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում պրակտիկաների իրականացման և դուալ ուսուցմամբ կրթական ծրագրերը կազմակերպելու նպատակով, բարելավվել են դասավանդման և գնահատման մեթոդները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն համապատասխանում է Չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԼՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Նախորդ հավատարմագրման արդյունքում ստացած խորհրդատվությունները հիմք ընդունելով՝ քոլեջը բարելավել է մասնագիտական կողմնորոշման մեխանիզմները դիմորդների և ուսանողների շրջանակներում: Ուսանողների հավաքագրման աշխատանքների համար ձևավորվում է աշխատանքային խումբ, որը բաղկացած է դասախոսներից, ուսանողներից և կարիերայի կենտրոնի ներկայացուցիչներից: Դիմորդների հավաքագրման նպատակով քոլեջի կողմից կազմակերպվում են մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ՝ բաց դռների օրեր, փոխադարձ այցեր մարզի դպրոցներ և բուկլետների պատրաստում քոլեջի ուսանողների կողմից: Քոլեջի կողմից իրականացված հարցումների արդյունքների համաձայն՝ ուսանողների մեծ մասն ընդունվում է ծանոթների և հարազատների խորհրդով: Դիմորդների հավաքագրման մեխանիզմների արդյունավետության գնահատում քոլեջը չի իրականացրել:

ԼՏՊՔ-ն ընդունելություն իրականացնում է «Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգին համապատասխան: Քոլեջը ընդունելության քննություն է կազմակերպում միայն «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության շրջանակում՝ «Գծանկար» առարկայից: Մյուս մասնագիտությունների դեպքում ընդունելությունը տեղի է ունենում առանց քննությունների՝ ավարտական վկայականի գնահատականների հիման վրա:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի աճ է նկատվում հատկապես «Պոլիգրաֆիկական արտադրություն», «Մեխատրոնիկա», «Զբոսաշրջության կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունների ուղղությամբ, ինչը, ըստ քոլեջի ներկայացուցիչների, պայմանավորված է քոլեջում առկա ՄԿԾ-ների արդիականությամբ և նորերի ավելացմամբ: Քոլեջի ինքնավերլուծության համաձայն՝ հիմնական և միջնակարգ կրթությամբ սովորող

ուսանողների թիվը նախորդ փորձագիտական այցից հետո տարեցտարի աճել է միջինում 350-ից հասնելով 492-ի։

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառը եղել են անհարգելի բացակայությունները։ Հեռացումների քանակը նվազեցնելու նպատակով քոլեջում կազմակերպվում են հանդիպումներ Ուսանողական խորհրդի անդամների կողմից, իրականացվում են բացատրական աշխատանքներ, ինչպես նաև ծնողներին տեղեկացնում են բացակայությունների սահմանաչափի մասին։

Ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների ծանոթացնելու նպատակով առաջին կուրսերում կիսամյակը մեկ անգամ կազմակերպվում է ծնողական ժողով, որին ներկա են նաև տնօրենը և ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը։

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է կուրսղեկների և ՈԱԿ-ի միջոցով։ Ուսանողների կարիքների վերհանման հիմնական մեխանիզմներն են հարցումները և հանդիպումները քոլեջի վարչական կազմի հետ։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսանողների բարձրաձայնած կարիքները որոշ դեպքերում արտացոլվում են իրականացվող բարելավումների մեջ։ Օրինակ՝ հարցումների արդյունքում արձանագրված տեխնիկական հագեցվածության կարիքների հիման վրա քոլեջը ձեռք է բերել 5 նոր համակարգիչ։

Քոլեջը նաև կարևորում է ուսանողների ներգրավվածությունը խորհուրդների աշխատանքներում՝ նրանց կարիքներն ու առաջարկները վերհանելու համար։ Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ խորհուրդների կազմում ընդգրկված ուսանողները մեծ ակտիվություն չեն դրսևորում։

Քոլեջում կազմակերպվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քոլեջում չի իրականացվում խորհրդատվությունների արդյունավետության և ուսանողների կողմից դրանց բավարարվածության գնահատում։ Սակայն ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ ուսանողների 80%-ը ընդգրկված է այդ պարապմունքներում։

Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ մասնավորապես՝ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում չեն կազմակերպվում, սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին և պատասխանելու նրանց հարցերին ըստ անհրաժեշտության։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով, սակայն վարչական անձնակազմին դիմելու համար հստակ ժամանակացույց մշակված չէ։ Ըստ քոլեջի ինքնավերլուծության ուսանողների 100%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 90%-ը բավարարված է այդ ծառայություններից։

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում գործում է կարիերայի կենտրոն։ Կարիերայի ուղղորդման պատասխանատուն

կազմակերպում է բաց դռների օրեր, մասնագիտական կողմնորոշման համար այցելություններ դպրոցներ, ոչ ֆորմալ դասընթացներ, ինչպիսիք են «Անձի ինքնաբացահայտում և ինքնաճանաչում», «Հմտություններ և աշխատաշուկայի մարտահրավերներ», «Ինչպե՞ս գրել մրցունակ ինքնակենսագրական», «Ինքնազարգացում աշխատանքի ճանապարհին», «Աշխատանք և կարիերա», «Հաղորդակցման հմտություններ», «Ինչպես փնտրել աշխատանք և ներկայանալ հարցազրույցի»: Իրականացնում է անհատական խորհրդատվություններ ուսանողների շրջանում, վարում և պարբերաբար թարմացնում շրջանավարտների բազան, կազմակերպում հանդիպումներ՝ շրջանավարտների և գործատուների հետ քոլեջի ներսում և քոլեջից դուրս, ինչպես նաև հանդիպումներ զբաղվածության կենտրոնի աշխատակիցների և տնօրենի հետ՝ ծանոթանալու աշխատանք փնտրելու ուղիների ու զբաղվածության կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերին:

Քոլեջը համագործակցում է Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի հետ, իսկ կարիերայի ուղղորդման պատասխանատուն պարբերաբար տեղեկացնում է շրջանավարտներին թափուր աշխատատեղերի մասին, այդ թվում՝ քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Կարիերայի ուղղորդման պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիների ուսանողների զբաղվածության տվյալները: Շրջանավարտների հետագծի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որոշ մասնագիտությունների ուղղությամբ ցածր է զբաղվածության ցուցանիշը: 2023-2024 ուստարվա 107 շրջանավարտներից 20-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, իսկ 33-ը աշխատում են, որոնցից 14-ը՝ իրենց մասնագիտությամբ: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտությունները՝ համապատասխանաբար 33,3% և 58,3% մասնագիտությամբ աշխատող շրջանավարտներով:

Քոլեջում գործում է «Աշակերտական/Ուսանողական Ընկերություն», որը զբաղվում է ուսանողների բիզնես գաղափարների կյանքի կոչմամբ և արտադրությունների կազմակերպմամբ՝ ուսմանը զուգահեռ: Իրականացված աշխատանքների դիմաց ուսանողները ստանում են վարձատրություն: Ծրագրի շրջանակում քոլեջում ստեղծվել են Ուսանողական Ընկերություններ «Պոլիգրաֆիական արտադրություն», «Վերականգնվող էներգետիկա» և «Հագուստի պատրաստում» մասնագիտությունների շրջանակում: Դրանց կարող են անդամակցել քոլեջում սովորող ուսանողները: Օրինակ՝ «Վերականգնվող էներգետիկա» ուսանողական ընկերության շրջանակում ուսանողները իրականացնում են արևային կայանների և ջրատաքացուցիչների տեղադրման, մոնտաժման աշխատանքեր, իսկ «Պոլիգրաֆիական արտադրություն» ուսանողական ընկերության մասնակից ուսանողները պատրաստում են մատյաններ, ստուգման գրքույկներ, ուսանողական տոմսեր, այցեքարտեր և այլն:

Ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով ուսանողներին հանձնարարվում են կուրսային և դիպլոմային աշխատանքներ, որոնց թեմաները հաստատվում են բաժնի վարիչների կողմից: Բացի կուրսային աշխատանքներից, ուսանողներին հանձնարարվում են նաև ինքնուրույն աշխատանքներ և ռեֆերատներ՝

տարբեր մոդուլների շրջանակներում: Օրինակ՝ «Տեխնիկական մեխանիկա» մոդուլից՝ «Մեքենամասերում և սարքավորումներում օգտագործվող միացություններ», «Կարի արտադրության մեքենասարքավորումներ» մոդուլից՝ «Երկասեղանի կարակուդով կամրջակների կարման ավտոմատ սարքավորումներ»: Ուսանողների աշխատանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք արտահայտում են ինքնուրույնություն, ինչպես նաև պարունակում են վերլուծական մոտեցում:

Ուսանողական խորհուրդն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուներին: ՈՒԽ-ն քննարկում և պլանավորում է ուսանողների բացակայությունների հետ կապված և այլ կարգապահական հարցեր, ինչպես նաև տարվա ընթացքում նախատեսված միջոցառումները՝ Տոների նշում, մրցույթների կազմակերպում, այդ թվում նաև նախատեսվում է այլ քոլեջի ՈՒԽ-ի հետ կազմակերպել բանավեճի մրցույթ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր ևս քննարկվել են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ուսանողական խորհուրդն իրականացնում է իր միջոցառումների իրազեկման մասին աշխատանքներ:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական ծառայությունների արդյունավետությունը գնահատվում է հարցումների միջոցով: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են քոլեջի ռեսուրսներին և նյութատեխնիկական հագեցվածությանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից դիմորդների հավաքագրման նպատակով կիրառվող բազմաբնույթ մեխանիզմները, որոնք նպաստել են դիմորդների թվի աճին: Փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ անհրաժեշտ է պարբերաբար գնահատել այդ միջոցառումների արդյունավետությունը՝ ապահովելու դրանց առավելագույն ազդեցությունը: Դիմորդների և ուսանողների մասնագիտական կողմնորոշման գործընթացներում կատարվող աշխատանքները կարևոր ազդեցություն են ունենում ճիշտ մասնագիտության ընտրության վրա, սակայն այս գործընթացները կարող են դառնալ ավելի արդյունավետ, եթե խորացվեն համագործակցությունները դպրոցների և այլ կրթական հաստատությունների հետ, ինչպես նաև ապահովվի շարունակական հետադարձ կապ դիմորդներից և ուսանողներից:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացները, թեև որոշ չափով արտացոլվում են բարելավումներում, կարիք ունեն համակարգված մոտեցման: Կարևոր է ապահովել ուսանողների ավելի ակտիվ ներգրավվածություն այս գործընթացներում՝ հարցումների որակի և մասնակցության մակարդակի բարձրացման միջոցով, ինչը կնպաստի ստացված տվյալների ավելի նպատակային օգտագործմանը և կրթական ծառայությունների բարելավմանը:

Քոլեջում իրականացվող նախաքննական խորհրդատվությունները կարևոր գործիք են ուսանողների համար անհասկանալի հարցերին պատասխանելու ու աջակցության համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ դրանց արդյունավետության և ուսանողների բավարարվածության վերաբերյալ գնահատումներն ու վերլուծությունները կնպաստեն խորհրդատվությունների որակի բարելավմանը և ուսանողների առաջընթացին: Բացի այդ, օտար լեզվի իմացության զարգացմանն ուղղված լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը կնպաստի ուսանողների մրցունակության բարձրացմանը և քոլեջի միջազգայնացմանը:

Քոլեջի կարիերայի կենտրոնը կատարում է ակտիվ աշխատանքներ շրջանավարտների զբաղվածության խթանման ուղղությամբ, սակայն անհրաժեշտ է ավելի խորը վերլուծություններ անցկացնել շրջանավարտների զբաղվածության մակարդակի, աշխատաշուկայի պահանջների և կրթական ծրագրերի համապատասխանության վերաբերյալ: Այս վերլուծությունները կօգնեն գնահատել կենտրոնի գործունեության արդյունավետությունը և կատարել անհրաժեշտ բարելավումներ ուսանողների զբաղվածության ցուցանիշները բարձրացնելու նպատակով:

Դրական են ուսանողների հետազոտական աշխատանքներում վերլուծական մոտեցումն ու ինքնուրույնության դրսևորումը, ինչը նպաստել է նրանց վերլուծական մտածողության զարգացմանը և խնդիրների ինքնուրույն լուծման կարողությունների ձևավորմանը:

Ուսանողների իրավունքների պաշտպանության նպատակով քոլեջում ստեղծված մեխանիզմները, ինչպես օրինակ՝ կուրսղեկների համակարգը, Ուսանողական խորհուրդը և բողոքների քննարկման կարգը, ապահովում են ուսանողների համար աջակցության որոշակի մակարդակ: Սակայն խորհուրդներում ուսանողների ակտիվ ներգրավվածության խթանումը կարող է նպաստել խնդիրների ավելի արդյունավետ վերհանմանը և ուսանողների մասնակցության բարձրացմանը կրթական գործընթացներում:

Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ չնայած կրթական, խորհրդատվական և օժանդակող ծառայությունների գնահատման որոշ մեխանիզմների առկայությանը, դրանց արդյունավետությունը պետք է շարունակաբար վերանայվի և բարելավվի՝ ապահովելու կրթական ծառայությունների և ուսումնական միջավայրի շարունակական զարգացում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո բարելավել է մասնագիտական կողմնորոշման և դիմորդների հավաքագրման մեխանիզմները, ներդրել է ուսանողների կրթական կարիքների վերհանման որոշ գործիքներ, կազմակերպում է խորհրդատվական պարապմունքներ, կարիերայի կենտրոնի գործունեությունը նպաստում է ուսանողների աշխատանքի տեղավորմանը և նրանց կարիերայի զարգացմանը, ուսանողներն իրականացնում են հետազոտական և վերլուծական աշխատանքներ, առկա են ուսանողների ձեռնարկատիրական կարողությունների ձևավորմանը միտված միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն համապատասխանում է Չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԼՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ՝ ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Քոլեջն իր 2023-2030 թթ.-ի ՌԾ-ում նպատակ է սահմանել մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական ներուժի ապահովումը: Քոլեջն իր ՌԾ-ով շեշտադրել է նաև դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականության հստակեցումը, ամրագրումը և թափանցիկ դարձնելը՝ հիմք ընդունելով սեփական կարիքների գնահատման արդյունքները, ինչպես նաև բարելավելով դասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմի կանոնավոր գնահատման ու կարիքների վերհանման համակարգը՝ բարձրացնելով դրա օբյեկտիվությունն ու հուսալիությունը:

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում դասախոսների ընդունման և աշխատանքից ազատման գործընթացն ամրագրված է 2022 թվականին հաստատված «Ներքին կարգապահական կանոններում»: Քոլեջը շեշտադրում է նրանց մասնագիտական որակավորումն ու անգլերեն լեզվի իմացությունը որպես հիմնական ընտրության չափանիշներ:

Քոլեջում առկա են նաև դասախոսական կազմի համար նախատեսված պաշտոնի անձնագրեր, որոնցում նկարագրված են ընտրության պահանջներն ու գործառույթները: Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում շեշտադրվել է դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականության հստակեցման անհրաժեշտությունը՝ հիմնվելով քոլեջի կարիքների գնահատման արդյունքների վրա: Հիմք ընդունելով փորձագիտական խորհրդատվությունները՝ քոլեջը հստակեցրել է դասախոսների ընտրության չափանիշները և գործընթացը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ: Հայտարարությունները տարածվում են Ֆեսբուքյան էջի և զբաղվածության կենտրոնի միջոցով:

Մրցույթ անցկացնելու համար քոլեջում տնօրենի համապատասխան հրամանի հիման վրա ձևավորվում է հանձնաժողով: Հանձնաժողովը մրցույթի ավարտից հետո կազմում է արձանագրություն: Մրցույթի ամբողջ ընթացքը տեսագրվում և ձայնագրվում է՝ գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար: Մինչ այժմ մրցույթներին մասնակցել են միջինում 2 թեկնածու: Մրցույթի ընթացքում յուրաքանչյուր թեկնածուի հետ անցկացվում է հարցազրույց, որի ընթացքում տրվում են դասավանդման մեթոդներին և տվյալ առարկային կամ մոդուլին վերաբերող մասնագիտական հարցեր: Հարցատոմսը ներառում է 5 հարց՝ 3-ը մասնագիտական, 2-ը՝ մեթոդական: Մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը:

Ներկայումս քոլեջում դասավանդում են 44 դասախոս, որոնցից 43-ը ունեն բարձրագույն կրթություն, 1-ը՝ միջին մասնագիտական: Դասախոսական կազմի ներկայացուցիչներից 2-ը գիտությունների թեկնածու են: Ներկայումս քոլեջի 2 դասախոս

գործատուներ են։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտ-դասախոսները 2-ն են։

Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածությունը ձևավորվում է նվազագույնը 4-7 առարկաներով (մոդուլներով), իսկ որոշ դասախոսներ դասավանդում են մինչև 11-13 մոդուլներ։

2015թ. քոլեջում հաստատվել է «ԼՏՊՔ ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, նրանց խրախուսման (այդ թվում՝ ֆինանսական շահադրդման) կամ պատասխանատվության ենթարկելու» կանոնակարգը, որում սահմանված են գնահատման համար պահանջներ, խրախուսման և տույժի ձևեր։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այն դեռևս չի գործածվել քոլեջի կողմից։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանում առկա չափանիշները բավական ընդհանրական են և չեն տարբերվում ղեկավար և մանկավարժական աշխատողների համար։

Դասախոսական կազմի գնահատման հիմնական մեխանիզմն ուսանողների շրջանում իրականացվող հարցումներն են։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր ուսումնական տարի հարցումներին մասնակցում են ուսանողների մոտ 50-60%-ը։ հարցումների արդյուքների վերլուծությունից պարզ դարձավ, որ վերհանվել են դասավանդման մեթոդների ընտրության վերաբերյալ խնդիրներ։ Արդյունքում բաժնի վարիչները քննարկում են ունեցել դասախոսների հետ ինտերակտիվ մեթոդների կիրառման վերաբերյալ։

Գնահատման համար հիմք են հանդիսանում նաև մեթոդիստի և բաժինների վարիչների կողմից կատարած դասալսումները։ Քոլեջում գործում է «Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգը»։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դասալսումները կատարվում են տարեկան ժամանակացույցի համաձայն, իսկ փոխադարձ դասալսումները հնարավորություն են տալիս դասախոսներին փոխանակել իրենց փորձը։ Դասալսման ընթացքում հատուկ ձևաթերթում նշվում են նկատված թերությունները և առաջարկվում բարելավման ուղիներ, ինչպես նաև ներքին լավ փորձի տարածման առաջարկներ։

Դասալսումների արդյունքում վերհանվել են մի շարք խնդիրներ, որոնց համար առաջարկվել են լուծումներ։ Օրինակ՝ դասերի ժամանակ ավելի շատ ուշադրություն դարձնել պասիվ ուսանողներին և դասապրոցեսում ընդգրկել բոլոր ուսանողներին դասավանդման ուսանողակենտրոն մեթոդների կիրառման միջոցով։

Դասախոսները դասալսումների հիման վրա կատարում են ծրագրային փոփոխություններ, որոնք հիմնականում վերաբերում են ուսումնառության նյութերի վերանայմանը և տեսական ու գործնական ժամերի վերաբաշխմանը։ Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ՝ առկա խնդիրները վերհանելու և համապատասխան լուծումներ գտնելու նպատակով։ Այս խնդիրների քննարկումները կազմակերպվում են ինչպես բաժնի նիստերում, այնպես էլ մեթոդմիավորման նիստերում։

Փորձագիտական այցի ընթացքում պարզվել է, որ ներքոլեջային փորձի փոխանակման միջոցառումները հստակ պլանավորված և կանոնակարգված են: ԼՏՊՔ բաժինների վարիչները աշխատում են սկսնակ դասախոսների հետ՝ աջակցելով նրանց մասնագիտական զարգացմանը: Սկսնակ դասախոսները փորձի ձեռքբերման նպատակով դասալսումներ են անցկացնում փորձառու դասախոսների դասերին:

Քոլեջում գործում է դասախոսների խրախուսման ընթացակարգ: Խրախուսումները տրամադրվում են ուսումնական գործընթացում ցուցաբերած հաջողությունների, ինչպես նաև քոլեջի զարգացմանն ուղղված միջոցառումներում ակտիվ մասնակցության համար: Այսպես օրինակ, խրախուսվել են ինքնավերլուծության գործընթացում ներգրավված թիմի անդամները, այդ թվում՝ դասախոսները, ընդունելության հանձնաժողովի անդամները, ինչպես նաև այն դասավանդողները, ովքեր կազմակերպել են սպորտային միջոցառումներ կամ ունեցել են հաջողություններ այլ կրթական և մշակութային նախաձեռնություններում:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գնահատման արդյունքներով վերապատրաստումների կազմակերպման համար հատուկ ֆինանսական միջոցներ չեն հատկացվել: Այնուամենայնիվ, դասախոսական կազմը վերապատրաստումներ է անցնում միջազգային համագործակցությունների շրջանակներում: Վերջին հինգ տարիների ընթացքում քոլեջի 29 դասախոսներ մասնակցել են տարբեր դասընթացների և սեմինարների, ներառյալ՝ «Mission Publiques» առցանց սեմինարը, GIZ կազմակերպության և «ԻՆՖՈԻՍ» ՀԿ-ի ՏՀՏ դասընթացը, «Շտինգեն Քիդս» կրթական ծրագրի շրջանակում կազմակերպված «Վերականգնվող էներգետիկայի հիմունքները» դասընթացը, ինչպես նաև «Գլոբալ ցանցեր» թեմայով դասընթացներ: Բացի այդ, քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող մեթոդական վերապատրաստումներին:

Վերապատրաստում անցած դասախոսներն իրենց ձեռք բերած գիտելիքներն ու փորձը ներկայացնում են նիստերի ժամանակ՝ մյուսներին ծանոթացնելով նոր մեթոդներին և մոտեցումներին: Մասնագիտական մոդուլների դասախոսները կազմակերպում են աշխատաժողովներ և մեթոդական դասընթացներ ուսանողների և գործընկերների համար՝ ընդգրկելով թեմաներ, ինչպիսիք են՝ «Կրիպտոարժույթների կարևորությունը և վտանգները», «Հաղորդակցման մոտեցումների զարգացումը անգլերեն լեզվի դասավանդման մեջ», «Ուսանողների մոտիվացիան ուսման գործընթացում» և «Ուսուցման նորարարական մեթոդների ներդրումը մասնագիտական կրթական համակարգում»:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայությանը՝ հարկ է նշել, որ վերջին հինգ տարիներին դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի: Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 48 է: Դասախոսական կազմի կայունությունը և սերնդափոխությունն ապահովելու նպատակով տարբեր բաժիններում ներգրավված են ինչպես փորձառու, այնպես էլ երիտասարդ դասախոսներ: Մասնավորապես, «Թեթև արդյունաբերության և զբոսաշրջության» բաժնում աշխատում է 15 դասախոս, «Հանրակրթական առարկաների» բաժնում՝ 17 դասախոս, իսկ «Տնտեսագիտություն և հաշվողական տեխնիկայի» բաժնում՝ 12 դասախոս: Նրանց աշխատանքային փորձը տատանվում է 2-ից 46 տարվա միջև: Այս բաժիններում ապահովված է մասնագիտական

մոդուլների դասավանդման համար անհրաժեշտ դասախոսական կազմը։ Դասախոսական կազմի ռեզերվ քոլեջը չի ձևավորել։

Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցները իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում։

Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի գործառույթները սահմանվում են նրանց հետ կնքված պայմանագրերով և համապատասխան պաշտոնների անձնագրերով։ Պաշտոնների անձնագրերում նշված են յուրաքանչյուր պաշտոնի համար պահանջվող որակավորումները և հմտությունները, ինչպես նաև ներկայացված են տվյալ պաշտոնին բնորոշ հիմնական գործառույթներն ու պարտականությունները։

Դատողություններ։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում նախորդ հավատարմագրումից հետո վերանայվել են դասախոսական կազմի ընտրության մեխանիզմները, որոնք հնարավորություն են տալիս ներգրավել կրթական ծրագրերի իրականացման համար պահանջվող որակավորում և փորձառություն ունեցող մասնագետներ։ Ներդրված մրցութային մեխանիզմները կարող են նպաստել մրցունակ կադրերի ներգրավմանը, ինչն էլ կուժեղացնի քոլեջի դասախոսական կազմի ներուժը։ Գործատու դասախոսների թվի ավելացումը կնպաստի աշխատաշուկայի հետ ավելի սերտ կապերի ձևավորմանը՝ դասախոսների համար ստեղծելով նոր համագործակցության և փորձի փոխանակման հնարավորություններ։

Քոլեջում գործող դասախոսական կազմի գնահատման մեխանիզմները, մասնավորապես ուսանողական հարցումները և դասալսումները, դրական ազդեցություն ունեն դասավանդման գործընթացի վրա՝ հնարավորություն տալով վեր հանել խնդիրները և կատարել բարելավումներ։ Փորձագիտական խումբը շեշտադրում է դասախոսական կազմի գնահատման համար մշակված կարգի վերանայման անհրաժեշտությունը՝ ներառելով գնահատման արդեն կիրառվող մեխանիզմները և ընդլայնելով դրանց շրջանակը։ Կարգի արդիականացումը հնարավորություն կտա ստեղծել գնահատման գործընթացը դարձնել ավելի համակարգված, ինչը կնպաստի դասավանդման որակի բարձրացմանը և դասախոսների մոտիվացիայի աճին։

Դասախոսների խրախուսման գործընթացների առկայությունը կարևոր գործոն է նրանց մոտիվացիայի և ներգրավվածության բարձրացման համար։ Փորձագիտական խմբի դիտարկմամբ խրախուսման չափանիշների հստակեցումը կխթանի դասախոսների նախաձեռնողականությունը և նրանց ակտիվ մասնակցությունը քոլեջի զարգացման գործընթացում։

Քոլեջի դասախոսական կազմը մասնակցում է տարբեր միջազգային ծրագրերով իրականացվող վերապատրաստումների, ինչը նպաստում է կրթական գործընթացի արդիականացմանը և նորարարական մեթոդների կիրառմանը։ Այնուամենայնիվ, վերապատրաստումների համար ֆինանսական միջոցների նախատեսումը կնպաստի վերապատրաստումների պլանավորված և նպատակային իրականացմանը՝ հիմնված քոլեջի կարիքների գնահատման արդյունքների վրա։

Դրական են քոլեջում նկատվող դասախոսական կազմի երիտասարդացմանն ուղղված քայլերը։ Միևնույն ժամանակ, դասախոսական կազմի կայունությունն ապահովելու համար

նպատակահարմար է ձևավորել ռեզերվային կազմ, ինչը կնվազեցնի կադրերի պակասի ռիսկը և կապահովի ուսումնական գործընթացի անխափանությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը բարելավել է դասախոսական կազմի ընտրության մեխանիզմները, ունի մասնագիտական համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, դասավանդման գործընթացում ներգրավում է գործատուներին, ներդրվել են դասախոսական կազմի գնահատման որոշ մեխանիզմներ, համագործակցությունների շնորհիվ դասախոսները մասնակցում են վերապատրաստումների ու դասընթացների, հաստատությունը քայլեր է ձեռնարկում դասախոսական կազմի երիտասարդացման և սերնդափոխության ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն համապատասխանում է Չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԼՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

ՄՈՒՀ-ում հետազոտության իրականացումը չի դիտարկվում որպես ռազմավարական առաջնահերթություն, սակայն հետազոտական-վերլուծական աշխատանքների կատարումը հանդիսանում է մասնագիտական մոդուլների բաղկացուցիչ մաս: Քոլեջի կողմից կրթական ծրագրերի շրջանակում հետազոտական աշխատանքների ուղղությունները սահմանված չեն: Փորձագիտական ուսումնասիրություններից և մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում հաստատված է անհատական և խմբային գործնական աշխատանքների ցանկ, որը նախապես քննարկվում է մեթոդմիավորման նիստերում: Սահմանված ցանկից ուսանողներն ընտրում են իրենց թեմաները:

Փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ուսանողները տարբեր մոդուլների շրջանակում կատարում են հետազոտական աշխատանքներ, որոնք ներառում են ռեֆերատներ, ինքնուրույն աշխատանքներ և կուրսային նախագծեր: Այսպես օրինակ՝ «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» մասնագիտության ուսանողները «Համակարգիչների կառուցվածքը» մոդուլից կատարել են հետազոտական աշխատանք «Համակարգչային բլոկի հավաքման գործընթացը վիրտուալ արհեստանոցում» թեմայով: Իրենց հետազոտությունների արդյունքում ուսանողները կազմել են եզրակացություններ, վեր հանել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման տարբերակներ՝ հիմնվելով նորագույն տեխնոլոգիաների վրա: Բացի այդ,

ուսանողները ներկայացրել են առաջարկություններ գործատուներին՝ իրականացվող աշխատանքների բարելավման համար։

«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանողները մշակել են զբոսաշրջության մեկօրյա փաթեթ։ Ուսանողները նախ ուսումնասիրել են Հայաստանի զբոսաշրջային վայրերը, լուծել դրանց հասանելիությունը, բարենպաստ ենթակառուցվածքների առկայությունը, որից հետո ըստ Google քարտեզի տրված հնարավորության մշակվել է երթուղի մեկնարկից մինչև վերադարձ՝ հստակ նշելով ճանապարհի երկարությունը և ժամանակը։ Ուսանողները նաև հանդես են եկել որպես էքսկուրսավար՝ ամփոփ ձևով ներկայացնելով տվյալ վայրի պատմամշակութային արժեքը։ Կատարված վերլուծությունների արդյունքները «Համակարգչային օպերատորություն և մասնագիտական գործունեություն» մոդուլի շրջանակներում ուսանողները ձևավորում են բուկլետի տեսքով էլեկտրոնային տարբերակով, իսկ պատրաստի բուկլետը տպագրվում և վերջնական տեսքի է բերվում «Պոլիգրաֆիական արտադրություն» մասնագիտության ուսանողների կողմից քոլեջի տպարանում՝ ապահովելով միջմասնագիտական համագործակցություն։ Ուսանողների կողմից կազմվել և ստեղծվել է նաև Վանաձոր համայնքի մշակութային վայրերի քարտեզը, որոնք առաջարկվել են քաղաքի որոշ հյուրանոցներին։ Քարտեզի հստակությունը ճշտվել է քաղաքապետարանի ճարտարապետական բաժնի հետ։

Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ քոլեջում «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտությամբ ուսանողներին տրվում են անհատական առաջադրանքներ, որոնց շրջանակում նրանք իրականացնում են ուսումնասիրություններ, ներկայացնում նոր գաղափարներ և հիմնավորում դրանց արդիականությունն ու կիրառելիությունը։ «Ստեղծագործական պրակտիկա» (երկրորդ կուրս) դասընթացի ընթացքում ուսանողները շրջակա միջավայրը դիտարկում են որպես ստեղծագործական ներշնչանքի աղբյուր, կատարում հարցումներ և մշակում հագուստի մոդելների էսքիզներ։ «Գործվածքի զարդարարական նախշապատում» (երրորդ կուրս) մոդուլում ուսանողները նախապես ուսումնասիրում են հայկական զարդանախշերի տեսակները, ապա ստեղծում էսքիզներ, որոնք հետագայում գծապատկերվում են գործվածքի վրա։ «Հագուստի հավաքածու» մոդուլի ուսումնառության ընթացքում ուսանողները հետազոտում են կանացի, տղամարդու և մանկական տարբեր տարիքային խմբերի ու ոճային ուղղությունների հագուստի առանձնահատկությունները։ Համաշխարհային շուկայի ուսումնասիրության հիման վրա նրանք մշակում են նոր նմուշների էսքիզներ՝ հաշվի առնելով նորաձևության միտումները և սպառողների պահանջները։ Մոդուլի ավարտին ուսանողները պետք է ներկայացնեն իրենց նախընտրած թեմայով հագուստի հավաքածուի 14 էսքիզ, ներկայացնեն իրենց կատարած ուսումնասիրությունների ու հետազոտությունների արդյունքները, ձևակերպեն եզրահանգումներ և ներկայացնեն իրենց էսքիզների նորարարական բաղադրիչները։ Այս մոդուլին հաջորդող «Հագուստի հավաքածու» ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողները գործնականում մշակում և ստեղծում են առնվազն 3 պատրաստի հագուստի նմուշ, որոնք միավորված են ընդհանուր գաղափարով։

Ուսանողների կատարած հետազոտական աշխատանքների դիտարկումից պարզ դարձավ, որ դրանցում առկա են ուսանողի ինքուրույն վերլուծությունները, եզրակացությունները և աղբյուրների հիշատակումը:

Քոլեջն ունի ավարտական աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ, որտեղ սահմանված են աշխատանքների կառուցվածքային և բովանդակային չափանիշները: «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողները կատարում են դիպլոմային աշխատանքներ, որոնց շրջանակում ուսումնասիրում են ժամանակակից նորաձևության միտումները, սպառողների պահանջները, ինչպես նաև սպասարկման ձեռնարկությունների և փոքր բիզնեսի տեխնիկական պահանջները: Դիպլոմային աշխատանքների թեմաները նախապես քննարկվում են գործատուների հետ և հաստատվում բաժնի կողմից՝ ապահովելով դրանց համապատասխանությունը ոլորտի պահանջներին: Ուսանողները ներկայացնում են գործնական առաջարկություններ գործատուներին՝ արտադրական գործընթացների և աշխատակարգերի բարելավման նպատակով: Գրագողությունից խուսափելու և աշխատանքների ինքնատիպությունը պահպանելու համար յուրաքանչյուր ուսանողին տրամադրվում են տարբեր ելակետային տվյալներ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հետազոտական աշխատանքների գնահատման չափանիշները դեռևս հստակեցված չեն:

Հարկ է նշել, որ քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց մասնագիտական գործունեության արդյունքում չունեն մշակված ձեռնարկներ կամ մեթոդական ուղեցույցներ:

Դասախոսական կազմի որոշ ներկայացուցիչներ, պայմանավորված «Erasmus+» ծրագրերում ներգրավվածությամբ, ուսումնասիրում են մասնագիտական ոլորտում միջազգային փորձը: 2021 թվականին քոլեջի երկու դասախոս, մեկ ուսանող և մեկ շրջանավարտ սկսել են մշակել ժեստերը խոսքի վերածող արհեստական բանականությամբ աշխատող սարքավորում: Նշված հետազոտական աշխատանքների ընթացքում հիմնադրվել է TINY ընկերությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում հետազոտական աշխատանքների կատարումը մասնագիտական մոդուլների բաղկացուցիչ մաս է: Այս մոտեցումը նպաստում է ուսանողների վերլուծական կարողությունների զարգացմանը, ստեղծագործական մտածողության խթանմանը և գործնական հմտությունների կիրառմանը: Ուսանողների իրականացրած նախագծերն ապահովում են ոլորտի գործնական պահանջների հետ կապը, ինչը կարևոր է նրանց մասնագիտական պատրաստվածության բարձրացման համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից հետազոտական համապարփակ քաղաքականության ձևավորումը և գործատուների կարիքներին համահունչ հետազոտական ուղղությունների սահմանումը կնպաստեն հետազոտական գործընթացների համակարգված և արդյունավետ իրականացմանը բոլոր կրթական ծրագրերում:

Ուսանողների դիպլոմային աշխատանքները, որոնք ներառում են ժամանակակից միտումների և շուկայական պահանջների ուսումնասիրություն, խթանում են նրանց

ձեռնարկատիրական հմտությունների և գործնական կարողությունների զարգացումը: Փորձագիտական խումբը կարևորում է հետազոտական աշխատանքների գնահատման չափանիշների հստակեցումը, ինչը կապահովի գնահատման գործընթացի օբյեկտիվությունը և հնարավորություն կտա ուսանողներին ստանալ արդյունավետ հետադարձ կապ՝ նպաստելով նրանց մասնագիտական կրթության հետագա զարգացմանը:

Ուսանողների հետազոտական աշխատանքների որակի բարելավման համար անհրաժեշտ է նաև պարբերաբար վերանայել մեթոդական ցուցումները, մշակել ձեռնարկներ, որոնք կհստակեցնեն հետազոտական աշխատանքի պահանջներն ու կատարման գործընթացը:

Փորձագիտական խումբն ընդգծում է քոլեջում դասախոսական կազմի հետազոտական աշխատանքի խթանման քաղաքականության և ընթացակարգերի մշակման անհրաժեշտությունը, ինչը կհանգեցնի հետազոտական գործունեության իրականացմանը և նորարարական մոտեցումների կիրառմանը: Խրախուսման մեխանիզմների ներդրումը, որոնք ներառում են ֆինանսական աջակցություն, մեթոդական խորհրդատվություն և հետազոտական նախագծերին մասնակցության հնարավորություններ, կնպաստեն քոլեջի դասախոսական կազմի կարողությունների զարգացմանը, ուսումնական գործընթացի արդիականացմանը և քոլեջի մրցունակության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերը համագործակցությունների միջոցով փորձի փոխանակման կազմակերպման ուղղությամբ: Խումբը կարևորում է նաև այդ համագործակցությունների միջոցով կրթական ծրագրերի շրջանակում ուսումնասիրությունների իրականացումը, ինչը կնպաստի համանման կրթական ծրագրերում առկա լավագույն փորձի վերհանմանը, դրա տեղայնացմանը քոլեջում և կրթական ծրագրերի շարունակական արդիականացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը իրականացրել է քայլեր կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներդրման և զարգացման ուղղությամբ, ուսանողներին տրամադրվում են վերլուծական բնույթ ունեցող առաջադրանքներ՝ հիմնված գործատուների կարիքների ուսումնասիրության վրա, հստակեցվել են հետազոտական աշխատանքների կատարման չափանիշները, ուսանողների աշխատանքներում ներառված են վերլուծական եզրահանգումներ ու առաջարկներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն համապատասխանում է Չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԼՏՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված է պարբերաբար թարմացնել և համալրել քոլեջի համակարգչային տեխնիկան, սարքավորումները, գույքը և այլ ռեսուրսներ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ռազմավարական այս նպատակի իրագործման համար ֆինանսական ռեսուրսներ քոլեջը չի հատկացրել:

Քոլեջն ունի 4485,3 մ² հողատարածք և 5272,24 մ² ընդհանուր մակերեսով մասնաշենքեր: Քոլեջում առկա է 19 լսարան և 3 համակարգչային լաբորատորիա, որոնք հագեցած են մոտ 30 համակարգչով և անհրաժեշտ ծրագրային ապահովմամբ (C++, AutoCAD, Logic Line, FESTO FluidSIM, SOLIDworks և այլն), ինչպես նաև լաբորատոր ստենդներով: Որոշ լսարաններ հագեցած են պրոեկտորներով և սմարթ գրատախտակներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա համակարգչային տեխնիկան կարիք ունի թարմացման, քանի որ ժամանակակից ծրագրային փաթեթները դժվարությամբ են աշխատում կամ չեն գործում առկա սարքավորումների վրա:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը ստեղծել է զբոսաշրջության լաբորատորիա (իրական հյուրանոցային սենյակի նմանությամբ), որը հագեցած է անհրաժեշտ հյուրանոցային պարագաներով: «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» ՄԿԾ-ի շրջանակում հաստատությունը ստեղծել է տեխնիկական լաբորատորիա: Լաբորատորիայի համար անհրաժեշտ սարքավորումները և նյութերը (զոդման սարքեր՝ իր պարագաներով, ազդանշանների գեներատոր, մուլտիմետրեր և այլն) քոլեջը ձեռք է բերել դրամաշնորհային ծրագրերի միջոցով:

Քոլեջն ունի մոդելավորման, նկարչության, տնտեսագիտության և լեզուների մասնագիտական կաբինետներ, որոնք հագեցած են դիդակտիկ նյութերով, մանեկեններով, գրականությամբ և այլն: Այցից պարզ դարձավ, որ որոշ մասնագիտական կաբինետներում գործնական առաջադրանքներ կատարելիս նյութերը բերում են ուսանողները, որոշ չափով տրամադրում է նաև քոլեջը:

Քոլեջում առկա է 2 կարի արհեստանոց և ձևանոց՝ հագեցած ունիվերսալ և մասնագիտական 30-ից ավել կարի մեքենաներով, 2 արդուկի մասնագիտացված սեղանով և կոճակ կարող, կոճականցք բացող, թևք տեղադրող, դակիչի և այլ սարքերով:

Քոլեջն ունի տպարան-հրատարակչատուն՝ հագեցած 2 համակարգչով, 2 գունավոր տպիչով, 2 պատճենահանող սարքերով, նախագծման, դակման, կտրման, ծալման, լամինացման և սոսնձման մեքենաներով: Ինքնավերլուծության համաձայն՝ հրատարակչատան կողմից հրատարակչական ծառայություններ են մատուցվում համայնքային տարբեր խմբերին և անհատ քաղաքացիներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տպարան-հրատարակչատունը օգտագործվում է նաև քոլեջի գործունեության լուսաբանման նպատակով բուկլետների և թռուցիկների տպագրման նպատակով, որոնց մշակման աշխատանքներին ներգրավված են լինում նաև ուսանողները:

ՄԱԿ-ի դրամաշնորհային ծրագրերի շրջանակում քոլեջը տեղադրել է 4.8 կՎտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայան, որը հնարավորություն է տալիս քոլեջին կրճատել էլեկտրաէներգիայի ծախսը և խնայել ֆինանսները: Բացի այդ այս ուղղությամբ

քոլեջն իրականացնում է կարճաժամկետ դասընթացներ՝ «Վերականգնվող էներգետիկա» թեմայով։

Քոլեջի գրադարանն ունի շուրջ 22,000 միավոր գրականություն, որից 4024-ը՝ դասագրքեր, 320-ը՝ մասնագիտական և գեղարվեստական գրականություն, 130-ը՝ ուսումնամեթոդական նյութեր, 687-ը՝ ուսումնաօժանդակ նյութեր և այլն։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում ռուսերենով է։ Գրադարանում տեղակայված է նաև ընթերցասրահը, առկա է նաև գրապահոց։ Գրադարանը թվայնացված չէ, առկա չէ էլեկտրոնային գրականություն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ դասախեսներ իրենց առարկայի շրջանակում ուսանողներին տրամադրում են էլեկտրոնային աղբյուրներ։ Քոլեջը բաժանորդագրված է մի շարք պարբերականների և գրադարանային ֆոնդը որոշակիորեն թարմացնում է գրքերով և ամսագրերով։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում համալրումներն իրականացվում են ըստ անհրաժեշտության դասախոսների ներկայացրած պահանջների հիման վրա։ Առանձին բյուջե գրադարանի համալրման համար նախատեսված չէ։

Քոլեջն ունի նաև մարզագույքով հագեցած մարզադահլիճ, սպորտդահլիճ, միջոցառումների դահլիճ, արխիվ և ապաստարան։ Սննդի կետ առկա չէ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման, ինչպես նաև դուալ կրթության շրջանակներում քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, օրինակ՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» ՄԿԾ-ի շրջանակում դասաժամն իրականացվում էր «Կիրովական» հյուրանոց ԱՊԸ-ում և այլն։

Քոլեջն իր ռեսուրսների բարելավումն իրականացնում է պետական ֆինանսավորմամբ, այլ կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով։ Այսպես օրինակ՝ 2023 թվականին Ferti բարեգործական հասարակական կազմակերպության նվիրաբերությամբ ձեռք են բերել վերականգնվող էներգիայի աղբյուրների ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կենտրոն-լաբորատորիաների հիմնական սարքավորումները։

2024 թվականին քոլեջի բյուջեի եկամուտների 95,7%-ը կազմել են պետական ֆինանսավորումից մուտքերը, իսկ 4,3%-ը՝ այլ եկամուտներից (ուսանողների վարձավճարներ, ծառայություններ) մուտքերը։ Քոլեջի ծախսերի դիտարկումից պարզ դարձավ, որ 2024 թվականի կտրվածքով ընդհանուր ծախսերի 86,13%-ը բաժին է ընկել աշխատավարձի ֆոնդին, 13,22%-ը՝ ծառայությունների և ռեսուրսների ձեռք բերմանը և այլ ծախսերին՝ 0,65 %-ը։

Քոլեջը չի կատարել կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նվազագույն ռեսուրսների հաշվարկ։ Ֆինանսական միջոցների և ռազմավարական առաջնահերթությունների վերլուծությունից պարզ է դարձել, որ հաստատությունը ֆինանսական առանձին պլանավորում չի իրականացնում՝ ըստ ռազմավարական նպատակների և կրթական ծրագրերի ուղղությունների։

Քոլեջն արտաքին փաստաթղթաշրջանառության համար կիրառում է «Mulberry» համակարգը։ Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային

փոստի միջոցով և թղթային տարբերակով: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կաթսայատուն կենտրոնական ջեռուցման նպատակով, հակահրդեհային անվտանգության համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ, ինչպես նաև լաբորատորիաներում առկա են անվտանգության կանոններին ծանոթանալու մասին գրանցամատյաններ: Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ անվտանգության կանոններն ուսանողներին ներկայացվում են նաև դասապրոցեսի մեկնարկից առաջ:

Քոլեջն ունի բուժկետ, սակայն այցից պարզ դարձավ, որ բուժաշխատողի հաստիքը թափուր է, և անհրաժեշտության դեպքում օգտվում են 1-03 ծառայությունից: Քոլեջում առկա են առաջին բուժօգնության համար առաջնահերթ բժշկական պարագաները և դեղորայքը: Հարկ է նշել նաև, որ քոլեջի աշխատակիցներն ունեն բժշկական ապահովագրություն:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջում առկա չեն թեքահարթակներ: Քոլեջը չունի տեղաշարժման խնդիրներ ունեցող ուսանողներ:

Ռեսուրսների վերաբերյալ կարիքների վերհանման նպատակով դասախոսների և ուսանողների շրջանակում իրականացնում են հարցումներ: Փորձագիտական այցի պարզ դարձավ, որ հարցումների արդյունքում բարելավվել են քոլեջի որոշ լսարաններ, ձեռք են բերվել համակարգիչներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո միջազգային ծրագրերի և համագործակցությունների շրջանակներում զգալիորեն բարելավվել են քոլեջի ռեսուրսները, ստեղծվել են կիրառական լաբորատորիաներ, ինչը նպաստում է մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերմանը և շուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի ֆինանսական պլանավորումը կապակցելու ռազմավարական նպատակների իրագործման հետ՝ նախատեսելով համապատասխան միջոցներ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման և բարելավման համար, քանի որ միայն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից կախվածությունը կարող է ժամանակի ընթացքում հանգեցնել այդ բարելավումների անկայունության և ոչ շարունակականության: Այս համատեքստում փորձագիտական խումբը շեշտադրում է ֆինանսական աղբյուրների բազմազանեցման անհրաժեշտությունը, ինչը կհանգեցնի քոլեջի ֆինանսական կայունությանը:

Դրական է, որ քոլեջը որոշ ծրագրերի շրջանակներում կիրառում է գործատուների ռեսուրսները, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը և ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ուսանողներին պատրաստ լինել աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաև ապահովել իրական կյանքում կիրառելի գիտելիքների և հմտությունների ձեռքբերում:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև մասնագիտական գրականության թվայնացումը, գրադարաններին անդամակցումը և բաժանորդագրությունների ավելացումը,

ինչը կնպաստի ուսանողների և դասախոսների կողմից ժամանակակից ուսումնական նյութերի և մասնագիտական գրականության օգտագործմանը: Կարևոր է, որ քոլեջը միջոցներ ձեռնարկի օտարալեզու գրականության համալրման ուղղությամբ, ինչը թույլ կտա ուսանողներին և դասախոսներին օգտվել ժամանակակից արդի գրականությունից:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին փաստաթղթաշրջանառության համար միասնական էլեկտրոնային համակարգի ներդրումը կնպաստի վարչարարության արդյունավետության բարձրացմանը, տեղեկության կառավարման գործընթացների կանոնակարգմանը:

Դրական է, որ քոլեջը դասախոսների և ուսանողների շրջանում իրականացնում է հարցումներ ռեսուրսների կարիքների գնահատման նպատակով, ինչը որոշակիորեն նպաստել է ենթակառուցվածքների բարելավմանը: Փորձագիտական խումբը կարևորում է ռեսուրսների կիրառելիության ու արդյունավետության շարունակաբար գնահատումը կարիքների վերհանման ու ռեսուրսների արդիականցման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո համագործակցությունների ու ծրագրերի մասնակցության ծնորհիվ համալրել ու բարելավել է իր ենթակառուցվածքները, ունի անհրաժեշտ ռեսուրսներ կրթական ծրագրերի իրականացման համար, համատեղ օգտագործում է գործընկեր կազմակերպությունների ու գործատուների ռեսուրսները գործնական պարապմունքների ու պրակտիկաների իրականացման համար, ապահովում է անհրաժեշտ միջավայր ուսանողների անվտանգ կենսագործունեության իրականացման համար, առկա են ռեսուրսների գնահատման որոշակի մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն համապատասխանում է Չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները կիսամյակային և տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունը ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքով նախատեսված իրենց վերադասին: Հաշվետվությունները ներկայացվում են կիսամյակային կտրվածքով: Դրանց մի մասը վերլուծական է՝ ընդգրկելով ընթացիկ գործընթացների նկարագրությունը, դրանց արդյունքները և դրանց համեմատական վերլուծությունը նախորդ տարիների ցուցանիշների հետ: Տնօրենի կողմից ներկայացված ուսումնական և ֆինանսական գործունեության

տարեկան արդյունքներն ամփոփվում են Կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններում։

Քոլեջն ապահովում է գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով Ֆեյսբուք սոցիալական ցանցը։ Այստեղ առկա է անընդհատ թարմացվող տեղեկատվություն քոլեջի գործունեության մասին՝ միջոցառումներ, կարճաժամկետ ծրագրեր, հրավիրված հյուրեր, բաց դասեր, դիպլոմային նախագծերի պաշտպանություններ, ռեֆերատների և կուրսային աշխատանքների հանձնում, թափուր աշխատատեղերի հայտարարություններ, շաբաթօրյակներ, այցելություններ Լոռու մարզի տարբեր դպրոցներ, բաց դռների օր և սպորտային միջոցառումներ։

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները հիմք ընդունելով՝ 2025թ.-ից քոլեջը նախատեսել է գործարկել պաշտոնական կայքէջ, որը նույնպես նպատակ ունի ապահովելու տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունը։ Այցի ժամանակահատվածում կատարվում էր նյութերի հավաքագրում կայքէջը ստեղծելու նպատակով։

Նախորդ հավատարմագրման խորհրդատվության հիման վրա այժմ ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ հետադարձ կապի ձևավորմանը նպաստող մեխանիզմներ։ ՄՈՒՀ-ի պրակտիկայի ղեկավարը և Կարիերիայի կենտրոնը համագործակցում են Լոռու ՄՄԾ-ի հետ և պարբերաբար տրամադրում են տեղեկատվություն մարզում անհրաժեշտ աշխատատեղերի վերաբերյալ։ Կարիերիայի կենտրոնի կազմակերպած միջոցառումները, ուղղված հասարակության հետ կապերի ամրապնդմանը, վերջին երեք տարիների ընթացքում աճել են։

ՄՈՒՀ-ը որպես հասարակության հետ հետադարձ կապի և հաշվետվողականության ապահովման միջոցներ է օգտագործում Քոլեջի էլեկտրոնային հասցեն և Ֆեյսբուքյան էջը։ Միաժամանակ, քոլեջը մշտական կապ է պահպանում շրջանավարտների, ուսանողների ծնողների և գործատուների հետ։ Շրջանավարտների հետ հետադարձ կապը կազմակերպվում է հարցումների և կուրսղեկների հետ համագործակցության միջոցով։ Ծնողների և գործատուների ներգրավվածությունն ապահովվում է հարցումների և քննարկումների միջոցով։ Կարիերայի ուղղորդման պատասխանատուն քոլեջ է հրավիրում հաջողության հասած շրջանավարտներին, ուսանողների հետ իրենց փորձով կիսվելու և մասնագիտական կողմնորոշմանն աջակցելու նպատակով։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ֆեյսբուքյան էջի հաղորդագրության հարթակներով հիմնականում դիմում են մասնագիտությունների, վճարովի ու անվճար տեղերի, ուսման տևողության մասին տեղեկատվություն ստանալու նպատակով։

Քոլեջը նաև կազմակերպում է միջոցառումներ, որոնք ուղղված են ուսանողների հոգևոր և ֆիզիկական զարգացմանը՝ սեմինարներ, մրցումներ, հանդիպումներ, բանավեճեր և այլն, որոշներին մասնակցում են նաև արտաքին շահակիցներ։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը մասնակցում է Զբաղվածության տարածքային կենտրոնի կողմից կազմակերպված աշխատանքի

տոնավաճառներին։ Կարիերայի կենտրոնի պատասխանատուն կապ է հաստատում շրջանավարտների հետ և նրանց տրամադրում տեղեկատվություն առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ։

ԼՏՊՔ-ում իրականացվում են նաև հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանը միտված միջոցառումներ։ Մասնավորապես՝ ՄՈՒՀ-ի կողմից իրականացվել են հետևյալ կարճաժամկետ ծրագրերը. 2021 թվականին «Ferti» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել է «Վերականգնվող էներգետիկա» թեմայով կարճաժամկետ դասընթաց, որին մասնակցել են նաև քոլեջի ուսանողները։ Քոլեջը 2022 թվականին նաև իրականացրել է «Դպրոցական սննդի պատրաստում» թեմայով կարճաժամկետ դասընթաց, որը կազմակերպվել է «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» կազմակերպության «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի նախաձեռնությամբ։ Դասընթացին մասնակցել են ՀՀ հանրակրթական դպրոցների խոհարարները։ Իրականացվել են «Հրուշակագործի կարճաժամկետ վերապատրաստման» դասընթացներ, ինչպես նաև առցանց դասընթացներ «Ինչպե՞ս գրել մրցունակ աշխատանքային կենսագրական» թեմայով։ Վանաձոր ինֆոտանը կազմակերպել է «Ինչպես դառնալ գրագետ մեդիա սպառող» թեմայով վեբինար։

44-օրյա պատերազմի վերաբերյալ ԼՏՊՔ-ի ուսանողների նախաձեռնությամբ քոլեջի տպարանում հրատարակվել է «Մերօրյա հերոսները» խորագրով գիրքը։ Տպագրական գործընթացում ակտիվ մասնակցություն են ունեցել «Պոլիգրաֆիկ արտադրություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողները։

Բացի այդ, ՄՈՒՀ-ը լավ փորձի տարածման նպատակով համագործակցում է նաև հանրակրթական դպրոցների հետ։ Այսպես օրինակ՝ «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողներն օգնել են յոթերորդ դասարանի աշակերտներին՝ նախագծային աշխատանք կատարել «Մաթեմատիկան հագուստի մոդելավորման աշխատանքներում» թեմայով։ Կազմված նախագծի արդյունքում ստեղծվել է դպրոցահասակ երեխաների համար նախատեսված հագուստի նախագիծ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում է ներքևից վերև հաշվետվողականության համակարգը, որն ապահովում է գործունեության թափանցիկությունը և արդյունավետ վերահսկողությունը։ Քոլեջի ստորաբաժանումները պարբերաբար ներկայացնում են իրենց հաշվետվությունները տնօրենին, որոնք հաճախ վերլուծական են՝ ընդգրկելով իրականացված գործընթացների արդյունքների գնահատումը։ Սա հնարավորություն է տալիս գնահատելու աշխատանքի արդյունավետությունը և գտնելու բարելավման ուղիներ։

Խումբը նաև գնահատում է, որ տնօրենի հաշվետվությունը համատեղում է ուսումնական և ֆինանսական տվյալները, ինչը համալիր պատկերացում է տալիս ՄՈՒՀ-ի հիմնական գործունեության մասին։ Սակայն նշվում է, որ տնօրենի հաշվետվությունը որպես առանձին, ամբողջական փաստաթուղթ չի ներկայացվում, ինչը կարող է սահմանափակել աշխատանքների վերլուծության ամբողջականությունն ու դրանց կապը ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների հետ։ Խումբը գտնում է, որ անհրաժեշտ է վերանայել

հաշվետվության ձևաչափը՝ քոլեջի գործունեության ավելի հստակ և համակարգված ներկայացման համար:

Դրական է գնահատվում այն, որ քոլեջն ապահովում է տեղեկատվության թափանցիկությունը՝ օգտագործելով Ֆեյսբուք սոցիալական հարթակը, ինչը նպաստում է հասարակության հետ ակտիվ կապին և քոլեջի գործունեության մասին լայն տեղեկացվածության ապահովմանը:

Խումբը դրական է համարում նաև քոլեջի նախաձեռնությունը՝ ստեղծելու պաշտոնական կայքէջ, ինչը կնպաստի հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը: Կայքը կօգնի ընդլայնել քոլեջի մասին տեղեկատվության տարածումը և լրացուցիչ հնարավորություններ կընձեռի արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման համար:

Դրական է նաև, որ քոլեջը կազմակերպում է հասարակության համար օգտակար միջոցառումներ՝ կարճաժամկետ դասընթացներ և սեմինարներ, որոնք նպաստում են գիտելիքի տարածմանը և համայնքի զարգացմանը: Քոլեջը պահպանում է ակտիվ կապ շրջանավարտների, ուսանողների ծնողների և գործատուների հետ՝ հանդիպումների և հարցումների միջոցով, ինչը հնարավորություն է տալիս ստանալ կառուցողական արձագանքներ և շարունակաբար բարելավել կրթական գործընթացները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում է հաշվետվողականության համակարգ, առկա են հարթակներ ՄՈՒՀ-ի գործունեության մասին հասարակությանը իրազեկելու և գործունեության թափանցիկությունը ապահովելու համար, գործարկվում են ներքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքներ, իրականացվում են հասարակությանը գիտելիքների փոխանցման ծրագրեր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ը համապատասխանում է չափանիշի 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջն իր 2023-2030 թվականների Ռազմավարական ծրագրում նպատակադրել է մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջավոր միջազգային փորձի ներդրումը, զարգացումն ու տարածումը, կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդրումը և տեղայնացումը, կրթության գլոբալ համակարգերին ինտեգրումը: Նպատակին հասնելու համար որպես խնդիր դիտարկվել են մասնագիտական կրթության բնագավառում ժամանակակից մոտեցումների կիրառումը, հմտությունների և կարողությունների

ձևավորմանը միտված ուսումնական փաստաթղթերի և նյութերի մշակումը, գործատուների հետ կապերի ակտիվացումը և այլն։

Արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման աշխատանքները համակարգում է քոլեջի տնօրենը։ Կապերի զարգացման և համագործակցությունների հաստատման աշխատանքներում ներգրավված են նաև քոլեջի կարիերայի պատասխանատուն և պրակտիկայի վարիչը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի կառավարման նպատակով պլան քոլեջի կողմից չի մշակվել։

Քոլեջը համագործակցում է գործատուների հետ բոլոր կրթական ծրագրերի շրջանակում։ Գործատուների հետ համագործակցության արդյունքում կազմակերպվում են ուսանողների պրակտիկաներ, ինչպես նաև իրականացվում է ուսումնական գործընթացը դուալ կրթական ծրագրերով։ Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը ակտիվացրել է իր կապերը գործատուների հետ, և այժմ ունի 28 գործող պայմանագիր և 5 հուշագիր պրակտիկաների կազմակերպման համար։ ՄՈՒՀ-ի ամենախոշոր գործատու-գործընկերներից են «Գլորիա» կարի ֆաբրիկան, ՀԱՊՀ (հիմնադրամ) Վանաձորի մասնաճյուղը, «Կիրովական» հյուրանոց ՍՊԸ-ն, «ՍԻՄ» տպագրատուն ՍՊԸ-ն և այլք։

2014 թվականից քոլեջում «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության համար ներդրվել է կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգ, որի միջոցով քոլեջը նպատակ ունի ստեղծել անհրաժեշտ հիմքեր ուսանողների շարժունության ապահովման համար։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համակարգը գործուն կիրառություն դեռ չունի։ Ուսանողների և դասախոսների շարժունության դեպքեր չեն արձանագրվել։ Կրթական ծրագրերի համադրության ու կրեդիտների փոխճանաչման վերաբերյալ գործընթացներ քոլեջը դեռևս չի իրականացրել։

ՄՈՒՀ-ը 2022 թվականից ներգրավված է «Erasmus+»-ի երկու նախագծերում՝ «Erasmus+» S.E.VET «Սոցիալական ձեռներեցության սխեմաների մշակում ՄԿՈՒ հաստատությունների համար Արևելքում» և «Erasmus +» BEM «Միկրոհավատարմագրումը Եվրոպայից դուրս»։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ծրագրերը համակարգվում են տնօրենի կողմից, դրանց մասնակցում են նաև մի քանի դասախոսներ՝ Տնտեսագիտության և հաշվողական տեխնիկայի և Թեթև արդյունաբերության և զբոսաշրջության մասնագիտական բաժիններից։ «Erasmus+» BEM «Միկրոհավատարմագրումը Եվրոպայից դուրս» ծրագրի շրջանակներում նախատեսվել է նաև ուսանողների մասնակցություն։

«Erasmus+» BEM «Միկրոհավատարմագրումը Եվրոպայից դուրս» ծրագրի շրջանակներում 8 երկրների 16 ներկայացուցիչների կողմից համատեղ քոլեջի «Տնտեսագիտության և հաշվողական տեխնիկայի» և «Թեթև արդյունաբերության և զբոսաշրջության» մասնագիտական բաժինների դասախոսների կողմից մշակվում են 10 միկրոհավատարմագրում շնորհող ծրագրեր՝ «Նախշապատում գործվածքի վրա», «Հագուստի մանր մասնիկների մշակում», «Խմբագրման դիզայն», «Գրաֆիկ դիզայն» և այլն։

«Գերմանական միջազգային համագործակցության ընկերության» GIZ կազմակերպության աջակցությամբ Քոլեջում մի քանի մասնագիտությունների ուսուցումն իրականացվում է դուալ կրթությամբ։ Քոլեջը մասնակցություն է ունեցել նաև մի շարք միջազգային ու տեղական աշխատաժողովների, դասընթացների, վերապատրաստումների և

միջոցառումների, օրինակ՝ SKILL MAN կազմակերպության կողմից ոլորտային հարցերին նվիրված աշխատաժողով, Եվրոպական կրթական հիմնադրամ (ETF)՝ «Մասնագիտական գերազանցության կենտրոնների միջազգային հարթություն» ծրագրի եզրափակիչ համաժողով, 2020թ. Միացյալ Թագավորություն, Փլիմուտ քաղաքում «Արարելով ապագան» ծրագրի շրջանակներում աշխատաժողովը, 2022թ. Գերմանիայի Լայփցիգ և Ֆրանսիայի Փարիզ քաղաքներում գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում աշխատաժողովը, 2023թ. Մոնտենեգրոյի հանրապետություն, Պոտգորիցա քաղաքում «ERASMUS +» BEM «Միկրոհավատարմագրումը Եվրոպայից դուրս» ծրագրի շրջանակներում աշխատաժողովը, 2023թ. Իտալիայի հանրապետություն, Թուրին քաղաքում «Մասնագիտության գերազանցության կենտրոնների միջազգային հարթություն» ծրագրի եզրափակիչ համաժողովը, 2024թ. Իսպանիայի Թագավորություն, Բարսելոնա քաղաքում և Պորտուգալիայի հանրապետություն, Լիսաբոն քաղաքում այցելություն Կատալոնիայի տարածաշրջանի ՄԿՈ հաստատություններ և շարժունության ու համագործակցության նախագծերի միջազգային սեմինարը և այլն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Քոլեջը սերտ համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ և հետևողական է նաև ՀՀ կառավարության տարածքային և համայնքային զարգացման ծրագրերին։

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջի դասավանդողների 48%-ը և վարչական աշխատակիցների 23%-ը տիրապետում են անգլերենին, իսկ մոտ 90%-ը՝ ռուսերենին։ Ուսանողների օտար լեզվի իմացությունը տարբեր է՝ կախված կրթական ծրագրից։ Լեզվաիմացության մակարդակի ամբողջական գնահատում քոլեջը չի իրականացրել։ Այդ մակարդակն ավելի բարձր է այն մասնագիտություններում, որտեղ օտար լեզվի ուսուցմանը հատկացվում է ավելի շատ ժամաքանակ, օրինակ՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված ուսուցմամբ» և «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» ծրագրերում։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թե՛ ներքին և թե՛ արտաքին շահակիցները կարևորում են օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև Զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանով սահմանված են այս ուղղությամբ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ, սակայն դեռևս ՄՈՒՀ-ը քայլեր չի ձեռնարկել դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն իր Ռազմավարական ծրագրում արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը դիտարկում է որպես առաջնահերթություն։ Քոլեջի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը նպաստում է վերապատրաստումների կազմակերպմանը, ռեսուրսների բարելավմանը։ Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ այս նպատակների արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է մշակել հստակ պլան, որը կօգնի համակարգել արտաքին կապերի աշխատանքները և ներգրավել ներքին շահակիցների ավելի լայն շրջանակի։

Խումբը դրական է գնահատում, որ քոլեջը բարելավել է համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ և հետևողականորեն մասնակցում է համայնքային զարգացման ծրագրերին: Սա օգնում է կրթական ծրագրերը համապատասխանեցնել համայնքի կարիքներին, ընդլայնել ուսանողների պրակտիկ հնարավորությունները և բարձրացնել շրջանավարտների զբաղվածության մակարդակը:

Խումբը կարևորում է, որ քոլեջն ունի գործընկեր գործատուներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակում, որոնց հետ համագործակցությամբ կազմակերպվում են ուսանողների պրակտիկաներ և իրականացվում են դուալ կրթական ծրագրեր: Նախորդ հավատարմագրումից հետո ակտիվացած համագործակցությունը նպաստում է ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը և նրանց մրցունակության բարձրացմանը աշխատաշուկայում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի մասնակցությունը «Erasmus+» ծրագրերին, ինչը ոչ միայն ամրապնդում է միջազգային կապերը, այլև շարունակաբար և համակարգված իրականացման դեպքում կարող է ապահովել ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը համատեղ նախագծերում: Սա կնպաստի կրթական գործընթացների արդիականացմանը և փորձի փոխանակմանը:

Հաշվի առնելով քոլեջի նպատակադրումը միջազգային համագործակցությունների ու փորձի փոխանակման խթանման ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի միջազգային կապերն օգտագործելու նաև կրթական ծրագրերի շրջանակում համեմատական վերլուծությունների իրականացման և լավագույն փորձի տեղայնացման նպատակով: Այս գործընթացները կնպաստեն կրթական ծրագրերի պարբերաբար արդիականացմանը և ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ներքին և արտաքին շահակիցները գիտակցում են օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման կարևորությունը միջազգայնացման գործընթացում: Այնուամենայնիվ, խումբը մտահոգ է, որ քոլեջը դեռևս չի ձեռնարկել բավարար քայլեր դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Չնայած ռազմավարական ծրագրում նախատեսված միջոցառումներին, դրանց գործնական իրականացումը հետաձգվում է, ինչը կարող է սահմանափակել քոլեջի դասախոսների և ուսանողների արդյունավետ ներգրավումը միջազգային համագործակցության ծրագրերում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո հաստատությունը քայլեր է ձեռնարկել արտաքին ու միջազգային համագործակցությունների հաստատման ու ծրագրերում ներգրավման ուղղությամբ, այդ համագործակցությունները նպաստել են ռեսուրսային բազայի համալրմանը, վերապատրաստման հնարավորությունների ստեղծմանը և փորձի փոխանակմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն համապատասխանում է Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2020 թ.-ից: Ինքնավերլուծության համաձայն՝ 2022 թվականի փետրվարին նշանակվել է որակի ապահովման պատասխանատու: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր տարի որակի ապահովման գործընթացները կազմակերպելու, հարցումների գործընթացին աջակցելու և դրանց վերլուծությունն իրականացնելու նպատակով ձևավորվում է նաև որակի ապահովման աշխատանքային խումբ: Խմբում հասարակական հիմունքներով ընդգրկվում են դասախոսական, ուսանողական և վարչական կազմի ներկայացուցիչներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս որակի ապահովման պատասխանատուի հաստիքը թափուր է, պարտականությունները կատարում է տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալը, ով հանդիսանում է նաև որակի ապահովման աշխատանքային խմբի ղեկավարը: Նախորդ հավատարմագրման ընթացքում ևս հաստիքը եղել է թափուր: Նախորդ փորձագիտական զեկույցում արձանագրված է շահերի բախումից զերծ որակի ապահովման ենթակառուցվածքի ձևավորման անհրաժեշտությունը: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն այս ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չի իրականացրել:

Որակի ապահովման գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը ձևավորել է փաստաթղթային որոշակի հենք: Այդ թվում են՝ 2020 թվականին ընդունված «Որակի ապահովման քաղաքականությունը», 2023 թվականին հաստատված «ԼՏՊՔ Որակի ապահովման կենտրոնի կանոնակարգը» և 2022 թվականին մշակված «Որակի ապահովման ուղեցույցը»: Բացի այդ, 2024 թվականին մշակվել է Որակի պատասխանատուի պաշտոնի անձնագիրը, որը սահմանում է պատասխանատուի գործառույթները:

ՈԱ քաղաքականության համաձայն՝ ՈԱ համակարգի նպատակներն են՝ ներդնել և կատարելագործել որակի կառավարման համակարգը Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի չափանիշներին ու ուղենիշներին համապատասխան, ապահովել մեխանիզմներ որակի ապահովման գործընթացներում շահառուների առավելագույն մասնակցության և որակին միտված թափանցիկ և հաշվետվողական մշակույթի տարածման նպատակով, մշտադիտարկել քոլեջի գործընթացների արդյունավետությունը՝ ապահովելով ծառայությունների շարունակական բարելավումը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ոչ բոլոր նպատակների ուղղությամբ են քայլեր իրականացվել: Մասնավորապես նախորդ փորձաքննության արդյունքում ևս վերհանվել է մշտադիտարկման ու գնահատման գործընթացների

բարելավման անհրաժեշտությունը, այսուհանդերձ այս ուղղությամբ քայլեր չեն իրականացվել։

Որակի ապահովման տարեկան պլանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քոլեջում իրականացվող որակի ապահովման աշխատանքները հիմնականում կենտրոնացած են շահակիցների բավարարվածության գնահատման վրա՝ օգտագործելով հարցումները և դասալսումները որպես մեխանիզմներ։ Այնուամենայնիվ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարցումների արդյունքների վերլուծությունը լիարժեքորեն չի իրականացվում, և դրանք միայն մասնակիորեն են օգտագործվում որոշումների կայացման համար։ Միևնույն ժամանակ, ուսումնասիրությունները վկայում են, որ հարցումների որոշ արդյունքներ, օրինակ՝ գրադարանի գրականության համալրման և համակարգիչների ավելացման անհրաժեշտությունը, հաշվի են առնվել, ինչի արդյունքում ձեռք են բերվել 3-4 նոր համակարգիչ։ Հարցումների արդյունքները քննարկվում են քոլեջի ղեկավար կազմի հետ, իսկ դասալսման արդյունքները քննարկվում են մեթոդիստի հետ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ հարցման արդյունքները փոխանցվում են ՈւԽ նախագահին, ով էլ ներկայացնում է արդյունքերն ուսանողներին։ Այնուամենայնիվ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի որակի ապահովման համակարգի կողմից հավաքագրված տվյալները դեռևս չեն ապահովում քոլեջի գործունեության բոլոր ուղղություններով կարիքների վերհանումը, ինչը հնարավորություն կտար հաշվի առնել բոլոր շահակիցների կարիքները կառավարչական որոշումները կայացնելիս։

Անդրադառնալով որակի ապահովման գործընթացների վերանայմանը՝ փորձագիտական խումբը նշում է, որ նախորդ հավատարմագրումից հետո կիրառվող հարցաթերթերից որոշները վերանայվել են, հարցումների վերանայմանը նաև մասնակցություն է ունեցել հանձնախմբում ներգրավված ուսանողը։ Գործող մեխանիզմները դեռևս կիրառման ու փորձարկման փուլում են։

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջի կողմից կազմակերպվում են հանդիպումներ՝ հարցումների արդյունքները քննարկելու նպատակով։ Այդ հանդիպումների ժամանակ քննարկվել են ուսանողների կարիքները, ինչպես նաև գործատուների առաջարկները՝ բարելավելու հաղորդակցման հմտությունները և օտար լեզվի մակարդակը։ Մասնավորապես, գործատուները նշել են հաղորդակցման հմտությունների բարելավման և օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը։ Այս խնդիրները լուծելու նպատակով գործատուների հետ հանդիպումների քանակն ավելացվել է, իսկ օտար լեզվի հետ կապված հարցերը քննարկվել են համապատասխան բաժինների վարիչների հետ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ քայլեր քոլեջի կողմից չեն նախատեսվում։

Անդրադառնալով որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի որակի ապահովման պատասխանատուի կողմից կազմակերպվել և համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը։ Յուրաքանչյուր շաբաթ հանդիպումներ ու քննարկումներ են իրականացվել ԻՎ-ի աշխատանքների հետ

կապված։ Ինքնավերլուծությունը հիմնականում տարածվել է շահակիցների շրջանակում, սակայն արտաքին շահակիցների կարիքներն ու արձագանքներն արտացոլված չեն ինքնավերլուծությունում։ Հարկ է նշել, որ որոշ չափանիշներում վերլուծությունները անհրաժեշտ հիմքեր և տեղեկատվություն չեն պարունակել հաստատության գործընթացների վերաբերյալ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ձևավորվել է որակի ապահովման համակարգի փաստաթղթային հենքը, որը համակարգված և նպատակային կիրառման դեպքում կարող է նպաստել որակի մշակույթի ձևավորմանը։ Այնուամենայնիվ, մշակված փաստաթղթերը և նախորդ հավատարմագրումից հետո կատարված քայլերը դեռևս չեն ապահովել ՈՆԱ համակարգի լիարժեք և արդյունավետ գործարկումը քոլեջում։ Առանց գործընթացների մշտադիտարկման ու գնահատման համար անհրաժեշտ գործիքակազմի ներդրման, որակի ապահովման համակարգը չի կարող նպաստել քոլեջի աշխատանքների շարունակական բարելավմանը։ Համակարգի նպատակների հստակեցումը և դրանց իրականացման համար նախատեսված գործողությունների իրականացումը կարևոր պայմաններ են որակի մշակույթի ձևավորման և հաստատության կայուն զարգացման համար։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ որակի ապահովման աշխատանքային խմբում ներգրավված են ներքին շահակիցներ, և պարբերաբար իրականացվում են հարցումներ ու դասալսումներ, ինչը նպաստում է շահակիցների կարիքների բացահայտմանը։ Սակայն գործընթացները հիմնականում սահմանափակվում են շահակիցների բավարարվածության գնահատմամբ՝ առանց խորքային գնահատելու և մշտադիտարկելու կրթական ծրագրերի արդյունավետությունը, ինչպես նաև կառավարման համակարգի և ռեսուրսների օգտագործման հնարավորությունները։ Խումբը կարևորում է տվյալների հավաքագրման և վերլուծության ընդլայնումը բոլոր ոլորտներում, ինչը կապահովի հիմնավոր որոշումներ կայացնելու հնարավորություն։ Կարիքների վերհանման գործիքակազմի բազմազանեցումը կնպաստի խնդիրների և ուժեղ կողմերի բացահայտմանը, ինչի հիման վրա հաստատությունը հնարավորություն կունենանա պլանավորելու բարելավմանն ուղղված գործընթացները։

Փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում, որ որակի ապահովման պատասխանատուի հաստիքը թափուր է, և նրա գործառույթները ներկայումս իրականացնում է տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալը։ Քոլեջն անհրաժեշտություն ունի ուշադրություն դարձնելու այդ հանգամանքի վրա, քանի որ այս իրավիճակը ստեղծում է շահերի բախման ռիսկ՝ հաշվի առնելով նույն պատասխանատուի կողմից միաժամանակ կրթական գործընթացների կազմակերպման և դրանց որակի ապահովման ու արդյունավետության գնահատման գործառույթների իրականացումը։ Նույն պատասխանատուի կողմից գործընթացների կառավարումը և կառավարման համակարգի արդյունավետության գնահատումը կարող են սահմանափակել կառավարման համակարգի խնդիրների բացահայտման հնարավորությունը։ Փորձագիտական խումբը նշում է, որ նախորդ հավատարմագրման ժամանակ ևս արձանագրված այս խնդրի ուղղությամբ

համապատասխան քայլեր չեն իրականացվել, ինչը թույլ կտար համակարգին զարգանալ ու դառնալ հաստատության բարելավման գործընթացների խթանման գործիք։

Փորձագիտական խումբը նաև նշում է, որ քոլեջի կողմից կազմակերպված հանդիպումների և քննարկումների միջոցով որոշ շահակիցների կարիքներ (օրինակ՝ օտար լեզվի իմացության բարելավման անհրաժեշտությունը) վերհանվել են, սակայն այս խնդիրների լուծման ուղղությամբ կոնկրետ քայլեր չեն իրականացվել։ Սա ցույց է տալիս, որ խնդիրների բացահայտումը ոչ միշտ է հանգեցրել դրանց լուծմանը, ինչը կարող է խոչընդոտել որակի ապահովման գործընթացների արդյունավետությանը և հաստատության շարունակական զարգացմանը։ Խումբը կարևորում է, որ քոլեջը երկարաժամկետ զարգացման նպատակով կարիքների հիման վրա մշակի գործողությունների հստակ պլան՝ ներառելով պատասխանատուներին, ժամկետներ և արդյունքների գնահատման հստակ ցուցիչներ։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո հաստատությունում տեղի ունեցած բարելավումները դեռևս չեն հանգեցրել որակի ներքին ապահովման համակարգի լիարժեք ներդրմանն ու որակի մշակույթի ձևավորմանը, կարիքների վերհանման մեխանիզմները չեն ապահովում քոլեջի գործունեության բոլոր ուղղություններով խնդիրների ու ուժեղ կողմերի վերհանումը, ՈՆԱ համակարգում առկա են շահերի բախման ռիսկեր, որակի ապահովման ենթակառուցվածքը դեռևս չի ձևավորվել, վերհանված կարիքների հիմքով բարելավումները կանոնակարգված չեն իրականացնում և չեն հանգեցնում քոլեջում ընթացող բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն չի համապատասխանում Չափանիշ 10-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Փորձագիտական խմբի ղեկավար
Լիլիթ Աբելյան

մարտի 3, 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Լիլիթ Աբելյան՝** 2009 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Ստացել է ուսուցչի, մանկավարժության բակալավրի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2017 թ. ավարտել է նույն համալսարանը և ստացել մանկավարժության մագիստրոսի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2016 թ-ից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս է: 2020 թ-ից մինչ այժմ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատուն է:
2. **Օլեգ Գևորգյան՝** 2007 թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը և ստացել դիպլոմավորված ճարտարագետի որակավորում՝ «Էլեկտրական տրանսպորտ» մասնագիտությամբ: 2010 թ. ավարտել է նույն համալսարանը և ստացել ասպիրանտի աստիճան՝ «Էլեկտրատեխնիկա» մասնագիտությամբ: 2012 թ. ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 2015 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում՝ էլեկտրատեխնիկայի ոլորտում: 2007-2010 թթ. աշխատել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կիբեռնետիկայի դեպարտամենտում որպես կրտսեր գիտաշխատող: 2012-2016 թթ. եղել է Կիբեռնետիկայի ֆակուլտետի ասիստենտ, իսկ 2016 թ-ից դասավանդում է որպես դոցենտ՝ «Էլեկտրոնիկա, կեսաբժշկական և չափիչ համակարգեր» ամբիոնում: 2015-2022 թթ. աշխատել է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում՝ տարբեր պաշտոններում: 2022 թ-ից հանդիսանում է ՀԱՊՀ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ և տնօրենի տեղակալ: Հեղինակ է 11 գիտական հոդվածների և 2 մեթոդական աշխատանքների:
3. **Սուսաննա Պիչիկյան՝** 2007 թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը՝ ստանալով ինժեներ-տեխնոլոգի որակավորում «Կարի, կաշվե իրերի տեխնոլոգիա» մասնագիտությամբ: 2008-2010 թթ. աշխատել է Գյումրիի N2 արհեստագործական ուսումնարանում որպես կարի արտադրության ուսուցման վարպետ: 2011 թ.-ից մինչ օրս դասախոսում է Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում՝ «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությամբ:
4. **Արտակ Խաչատրյան՝** 2020 թ. ընդունվել է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությամբ և ստացել տեխնիկ-ծրագրավորողի որակավորում: 2023-2024 թթ. եղել է քոլեջի որակի հանձնաժողովի անդամ-ուսանող: 2023 թ. մասնակցել է ՈԱԱԿ-ի ուսանող-փորձագետի վերապատրաստման դասընթացին: 2024 թ. ընդունվել է Հայաստանի Եվրոպական համալսարան՝ «Տեղեկատվական տեխնոլոգրաներ» մասնագիտությամբ: Տիրապետում է JavaScript ծրագրավորմանը, մասնավորապես MERN գործիքախմբին և վեբ զարգացմամբ զբաղվող հմտություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	18.11.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում տնօրենի տեղակալների հետ	10:30	11:30	60 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում	11:40	12:50	70 րոպե
4.	Դասալսումներ	13:00	13:40	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:50	14:50	60 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների (10-12 ներկայացուցիչ) հետ	15:00	15:50	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:00	16:50	50 րոպե
8.	Հանդիպում Քոլեջի խորհրդի անդամների հետ	17:00	17:50	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:00	18:30	30 րոպե

N.	19.11.2023 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում բաժնի վարիչների հետ			09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ			10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ			11:50	12:40	50 րոպե
4.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցերի տեխնիկականն սպասարկում» մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	12:50	13:40	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:50	14:50	60 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցերի տեխնիկականն սպասարկում»,«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»,			15:00	15:50	50 րոպե

	«Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ					
7.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցերի տեխնիկականն սպասարկում» մասնագիտության կրթական ծրագրերի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	16:00	16:50	50 րոպե
8.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Կարիերայի ուղղ. պատասխանատու, Պրակտիկայի ղեկավար, Գրադարանավար, Հաշվապահ, Կադրերի բաժնի տեսուչ, Արխիվավար, Մեթոդիստ, Լաբորանտների, Կաբինետի վարիչների) ղեկավարների հետ			17:00	18:10	70 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			18:20	19:00	40 րոպե

N.	20.11.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	09:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	10:20	11:00	40 րոպե
3.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	11:10	12:10	60 րոպե
4.	Բաց հանդիպում	12:20	13:00	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
6.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:20	15:00	40 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:10	17:00	110 րոպե
8.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:10	17:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Բաժինների տարեկան պլաններ և հաշվետվություններ	2
2.	Ուսանողների առաջադիմության բարձրացման փաստաթղթեր	2
3.	Կառավարման խորհրդի արձանագրություններ	2
4.	Կուսղեկների աշխատանքային պլաններ	2
5.	Շահակիցների կարիքների գնահատման հարցաթերթեր	2
6.	Վերջին տարիների ստորաբաժանումների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	2
7.	Բոլոր խորհուրդների արձանագրությունները	2
8.	Ստեղծագործական պրակտիկայի ծրագրեր	3
9.	Դիպլոմային նախագծի օրինակ	3
10.	ԿԳՄՍ նախարարություն ներկայացված ՄԿԾ-ների փոփոխությունների առաջարկությունների փաստաթուղթ	3
11.	Դուալ կրթության արդյունավետության վերլուծության հիմքեր	3
12.	Դասախոսների փաթեթներ	3
13.	Ուսումնառության պլաններ և թեմատիկ պլաններ, այդ թվում նաև հանրակրթական մասից	3
14.	Հանձնարարականների օրինակներ բոլոր ՄԿԾ-ի համար	3
15.	Գնահատման լրացված թերթիկների օրինակներ բոլոր ՄԿԾ-ներից , տարբեր մոդուլներից	3
16.	Պետական ամփոփիչ քննությունների հարցաշարեր և պետական քննությունների հարցատոմսեր	3
17.	Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություններ	3
18.	Ռեֆորատների օրինակներ	3
19.	ՈւԽ հաշվետվության օրինակներ	4
20.	ՈւԽ նիստերի արձանագրություններ	4
21.	Մանկավարժ-հոգեբանի աշխատանքային պլան և հաշվետվություններ	4
22.	ՈՒԽ աշխատանքային պլան	4
23.	Ուսանողների կարիքների վերհանման նպատակով լրացված հարցաթերթիկի օրինակներ	4
24.	Ուսանողների կողմից կատարված հետազոտական աշխատանքների օրինակներ	4
25.	Ստուգման գրքույկի օրինակ	4
26.	2022-2023 և 2023-2024 թթ. շրջանավարտների զբաղվածության տվյալներ	4
27.	Շրջանավարտների բազա	4

28.	Աշխատակիցների ընդունելության մրցույթի տեսագրության, ձայնագրության և DVD օրինակներ	5
29.	Վերջին երկու տարիների խրախուսում ստացած դասախոսների ցանկ	5
30.	ՊԴ կազմի ձևավորման հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ հրամանի քաղվածք	5
31.	Գնահատման թերթիկի օրինակներ ծնողների կողմից լրացված, QR-ի օրինակ	5
32.	Դասախոսի պաշտոնի անձնագրի օրինակ	5
33.	Դասախոսների հարցումների վերլուծությունների արդյունքներ	5
34.	Լաբորատոների և արհեստանոցների վարիչների պլաններ և հաշվետվություններ	5
35.	Դասախոսների մեթոդական զեկույցներ	6
36.	Նախահաշիվ	7
37.	Գրադարանային ֆոնդի մասին մանրամասներ	7
38.	Տեղական և միջազգային համագործակցությունների հուշագրեր	9
39.	Քոլեջների հետ համագործակցության հուշագրեր կամ այլ փաստաթղթեր	9
40.	ՈԱԿ աշխատանքային պլան	10
41.	Որակի կենտրոնի կողմից իրականացված հարցումների վերլուծություններ, որոնք հիմք են հանդիսացել որոշումների կայացման համար	10
42.	Որակի ապահովման հանձնախմբերի վերջին տարիների աշխատանքների արձանագրություններ կամ պլաններ և հաշվետվություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Մասնագիտական լաբորատորիաներ
- Գրադարան
- Համակարգչային լսարաններ
- Բուժկետ
- Մարզադահլիճ
- Միջոցառումների դահլիճ
- Արխիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԼՏՊՔ - Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ

ԿԳՄՄՆ - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - Մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈւ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈւՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈՆԱ - Որակի ներքին ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - Պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - Ռազմավարական ծրագիր

ԶՌԾ - Զարգացման ռազմավարական ծրագիր

ՈւԽ - Ուսանողական խորհուրդ

ՈւՕ կազմ -Ուսումնաօժանդակ կազմ